Inter-Parliamentary Union

For democracy. For everyone.

Empowered lives.
Resilient nations.

Խորհրդարանները եւ Կայուն Զարգացման Նպատակները

Ինքնագնահատման գործիքակազմ

Հեղինակային իրավունք © Միջխորհրդարանական միություն, 2016 թվական

Անձնական եւ ոչ առեւտրային օգտագործման նպատակով սույն հրատարակությունն ամբողջությամբ կամ դրա որոշակի հատվածներ կարելի է վերարտադրել՝ պայմանով, որ հեղինակային իրավունքի եւ աղբյուրի մասին հիշատակումները նույնպես պատճենվեն, եւ ոչ մի ձեւափոխում չարվի: Խնդրում ենք Միջխորհրդարանական միությանը ծանուցել սույն հրատարակության բովանդակության օգտագործման վերաբերյալ:

ISBN 978-92-9142-780-2

“Ձևավորումը և էջադրումը՝
ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի
«Նոր Հայաստան՝ ժամանակակից
խորհրդարան» ծրագրի շրջանակներում

“The translation of the Guidebook into English has been made possible within the UNDP “Modern Parliament for a Modern Armenia” project, co-implemented with the OxYGen Foundation, the International Center for Human Development, and the Westminster Foundation for Democracy, in cooperation with the National Assembly of the Republic of Armenia. The project is funded by the United Kingdom’s Good Governance Fund and the Government of Sweden”.

Սույն ուղեցույցի թարգմանությունն իրականացվել է ՄԱԶԾ «Ժամանակակից խորհրդարան՝ ժամանակակից Հայաստանի համար» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է ՕքսԵՋեն հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հանուն ժողովրդավարության Ուեսթմինսթեր հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Միացյալ Թագավորության Լավ կառավարում հիմնադրամի և Շվեդիայի կառավարության կողմից:

Բովանդակություն

Ներածություն 3

Ինչ են ԿԶՆ-ները 5

Գործողությունների նոր շրջանակ 6

ԿԶՆ-ների ազգայնացում 12

Խորհրդարանի ներգրավվածությունը ԿԶՆ-ների իրականացմանը 14

Ներառական գործընթաց 14

Խորհրդարանի պատրաստականության գնահատում. ինչից սկսել 18

Ե՞րբ պետք է կատարել ինքնագնահատում ԿԶՆ-ների համատեքստում 18

Ո՞վ է ներգրավված ինքնագնահատման գործընթացում 19

Ինչպե՞ս է կազմակերպվում ինքնագնահատումը 20

Ինքնագնահատման հարցեր 24

Հարցերի խումբ 1. Խորհրդարանում ԿԶՆ-ների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացում 24

Հարցերի խումբ 2. Ինչպես ԿԶՆ-ները գլոբալ մակարդակից բերել տեղական մակարդակ 27

Հարցերի խումբ 3. ԿԶՆ-ների ներգծումը խորհրդարանական մեխանիզմներում 29

Հարցերի խումբ 4. Օրենքների ընդունում՝ ի նպաստ ԿԶՆ-ների 33

Հարցերի խումբ 5. ԿԶՆ-ների ֆինանսավորում 35

Հարցերի խումբ 6. ԿԶՆ-ների իրագործման մշտադիտարկում 38

Հարցերի խումբ 7. Հասարակության ներգրավում 41

Հարցերի խումբ 8. Ինչպես ապահովել, որ ԿԶՆ-ները ծառայեն ամենակարիքավորներին 43

Ռեսուրսներ 46

Երախտիքի խոսք 48

Ներածություն

Մենք նաեւ ճանաչում ենք ազգային խորհրդարանների կողմից օրենսդրության ընդունման եւ բյուջեների հաստատման միջոցով իրականացվող էական դերը, ինչպես նաեւ մեր հանձնառությունների արդյունավետ կենսագործման համար հաշվետվականության ապահովման գործում նրանց ունեցած դերը: ... «Մենք՝ ժողովուրդներս» այն հանրահայտ բառերն են, որոնցով սկսվում է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը: Հենց «մենք՝ ժողովուրդներս» ենք, որ այսօր ուղք ենք դնում դեպի 2030 թվական տանող ճանապարհին: Մեր «ճամփորդությանը» մասնակցելու են ինչպես կառավարություններ, այնպես էլ խորհրդարաններ, Միավորված ազգերի կազմակերպության համակարգը եւ միջազգային այլ կառույցներ, տեղական իշխանության մարմիններ, տեղաբնիկ ժողովուրդներ, քաղաքացիական հասարակությունը, գործարար եւ մասնավոր հատվածը, գիտական եւ ակադեմիական համայնքը, եւ վերջապես՝ բոլոր մարդիկ:

«Կայուն զարգացման 2030 օրակարգ», Նյու Յորք, 2015 թ. սեպտեմբերի 25

«Կայուն զարգացման 2030 օրակարգը» աղքատությանը վերջ տալու եւ աշխարհը դեպի ներառական զարգացում տանող կենսակայուն ուղու վրա դնելու դարակազմիկ գլոբալ հանձնառություն է: Պետությունների ղեկավարների կողմից այն ընդունվել է 2015 թվականի սեպտեմբերին, Միավորված ազգերի կազմակերպության գագաթաժողովի ընթացքում: Այս հավակնոտ օրակարգի առանցքում 17 կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ-ներ) եւ 169 իրագործելի թիրախների մի համախումբ է:

Նախատեսվում է, որ ԿԶՆ-ները կնպաստեն ազգային քաղաքականությունների սեւեռմանն ու համակարգմանը՝ ուղղված մարդկության համար մեկ ընդհանուր տեսլականի կենսագործմանը: ԿԶՆ-ների հիմքում աղքատության կրճատման օրակարգի՝ Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ-ներ) կենսագործմանն ուղղված նախկին ջանքերն են: Դրանք հետամուտ էին յուրաքանչյուրի մարդու իրավունքների իրացմանը եւ գենդերային հավասարության, կանանց եւ աղջիկների զորացման ապահովմանը: Դրանք ներառում են կայուն զարգացման երեք հիմնասյուները՝ տնտեսական, սոցիալական եւ բնապահպանական զարգացում: Չնայած այն հանգամանքին, որ ԿԶՆ-ներն իրավական պարտադիր ուժ չունեն, կառավարությունները ստանձնել են իրենց կարողությունների առավելագույն չափով եւ սեփական ազգային գերակայություններին

համապատասխան՝ դրանք իրականացնելու բարոյական հանձնառություն:

«Օրակարգ 2030»-ը եւ դրանով սահմանված ԿԶՆ-ները մի քանի տարի շարունակ ընթացած ծավալուն խորհրդակցությունների եւ բանակցությունների արդյունքն են: Միջխորհրդարանական միությունը, ՄԱԶԾ-ն, երկրների խորհրդարանները եւ հարյուրավոր խորհրդարանականներ շատ ակտիվ դեր են խաղացել այդ պրոցեսի ողջ ընթացքում եւ հաստատակամորեն առաջ են մղել ժողովրդավարական կառավարմանը վերաբերող նպատակների ներառումը:

Ինքնագնահատման այս գործիքակազմի նպատակն է հետեւյալ հարցերով օժանդակել խորհրդարաններին եւ դրանց անդամներին.

- գնահատել ԿԶՆ իրականացման գործընթացում ներգրավվելու նրանց պատրաստականությունը.
- որոշարկել լրացուցիչ ռազմավարություններ, մեխանիզմներ եւ գործընկերություններ՝ աջակցելու ԿԶՆ-ների առավել արդյունավետորեն իրականացմանը:

Սույն գործիքակազմը մշակվել է, որպեսզի խորհրդարանականները կարողանան հատկորոշել հաջող աշխատաեղանակները, առկա բացերը, հնարավորությունները եւ քաղած դասերը: Այն խորհրդարանականներին կօժտի մի գործիքով, որի միջոցով նրանք արդյունավետորեն կկառուցակարգեն նոր օրակարգը եւ տարբեր նպատակները կներգծեն օրենսդրական գործընթացներում: Գործիքակազմը չունի կարգադրողական բնույթ: Այն ձեւակերպվել է այնպես, որ վերաբերելի լինի բոլոր խորհրդարանների դեպքում՝ անկախ դրանց քաղաքական համակարգից եւ զարգացման փուլից:

Ինքնագնահատումը մի մեթոդ է, որը խորհրդարանները կարող են օգտագործել՝ մեկնարկելու ներքին հենանիշների սահմանման իրենց սեփական գործընթացը եւ գնահատելու ԿԶՆ-ների իրականացման գործում ներգրավման իրենց պատրաստվածությունը: Ինքնագնահատման արդյունքում ձեւակերպված եզրակացությունները խորհրդարաններին թույլ են տալու սահմանել բարեփոխումների առաջնահերթություններ՝ ԿԶՆ-ներին իրենց արձագանքումը բարելավելու նպատակով: Վերջնական նպատակն է ապահովել, որ խորհրդարանները պատրաստ լինեն լիարժեք դեր խաղալ «Օրակարգ 2030»-ը կյանքի կոչելու գործում:

Ինչ են ԿԶՆ-ները

Մենք ողջունում ենք նոր՝ «Կայուն զարգացման օրակարգ 2030»-ը, որը երեւան եկավ իր 17 կայուն զարգացման նպատակներով (ԿԶՆ-ներ): Աղքատության վերացումն այս նոր օրակարգի ընդհանուր նպատակն է՝ զուգորդված տնտեսական, սոցիալական եւ շրջակա միջավայրի զարգացման խթանմամբ: Մենք ողջունում ենք այս օրակարգի հավակնոտությունը՝ լինել տրանսֆորմացիոն եւ չանտեսել ոչ մեկի, այդ թվում՝ ամենակարիքավոր ու խոցելի անձանց: Իսկապես, հաջողության հասնելու համար՝ կայուն զարգացմանն ուղղված որոշումների առանցքում պիտի լինի մարդ արարածը: Այն պետք է նպատակաուղղված լինի մարդկանց բարեկեցության ձեռքբերմանը՝ լիարժեք ուշադրություն դարձնելով շրջակա միջավայրի պաշտպանության պարտադրած սահմանափակումներին: Անհրաժեշտ է, որ մարդիկ փիրոջ զգացողությամբ վերաբերվեն այդ օրակարգին, որը պահանջում է նրանց լիարժեք մասնակցությունը: Մարդիկ անհատներ են, որոնք օժտված են իրավունքներով եւ միմյանց նկատմամբ ու շրջակա միջավայրի նկատմամբ պարտավորություններով: Բոլորս պարտավոր ենք ներդրումներ կատարել նրանց՝ որպես մեր ամենակարեւոր ռեսուրսի զարգացման գործում:

«Ժողովրդավարության ծառայեցումը խաղաղությանը եւ կայուն զարգացմանը. Այնպիսի աշխարհի կառուցում, որը ցանկանում են մարդիկ», Խորհրդարանի ղեկավարների չորրորդ համաշխարհային համաժողովի հռչակագիր 2015 թ. սեպտեմբերի 2

Կայուն զարգացման 17 նպատակները եւ դրանց 169 թիրախները ձեւակերպվել են այնպես, որ մարմնավորեն կայուն զարգացման բոլոր երեք հիմնասյուները՝ տնտեսական, սոցիալական եւ բնապահպանական: Դրանք նախատեսում են մի համապարփակ կարգավորող շրջանակ, որը կիրառելի է ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների դեպքում: Նպատակներն ընդգրկում են բացարձակ աղքատության վերացումից մինչեւ կլիմայի փոփոխության շրջադարձում, գենդերային հավասարության ձեռքբերումից մինչեւ սպառման եւ արտադրության օրինաչափությունների փոփոխություն (տես գծապատկերը): Մշակվել են մի շարք գլոբալ ցուցանիշներ, որոնք օգնելու են արձանագրել նպատակների ուղղությամբ առաջընթացը:

«Օրակարգ 2030»-ն ամրագրում է, որ զարգացմանն ուղղված գործընթացի առանցքում մարդն է: Կառավարություններին, խորհրդարաններին եւ շահագրգիռ այլ կողմերի այն կոչ է անում մշակել եւ կիրարկել օրենքներ եւ ծրագրեր, որոնք բավարարում են մարդկանց պահանջմունքները, կապեր են ստեղծում միմյանցից տարանջատված քաղաքականությունների միջեւ, պաշտպանում մարդու իրավունքները եւ չեն անտեսում որեւէ մեկի:

Գործողությունների նոր շրջանակ

ԿԶՆ-ները ոչ միայն հատկորոշում են ոլորտային գերակայությունները եւ սահմանում հավակնոտ նոր թիրախներ, այլ նաեւ հանդիսանում են աննախադեպ նորարարություն: Սա առաջին անգամն է, երբ որեւէ միջազգային պայմանագրով ճանաչվում է արդյունավետ, ներառական եւ հաշվետու հաստատությունների կենտրոնական դերը զարգացման գործընթացում:

Նպատակ 16-ը, որը նաեւ հայտնի է որպես կառավարման նպատակ, արտացոլում է ՄԽՄ-ի եւ ՄԱԶԾ-ի մոտ վաղուց ձեւավորված այն տեսակետը, որ ժողովրդավարական կառավարումը ոչ միայն ինքնանպատակ է, այլ նաեւ կայուն զարգացման, խաղաղության ու արդարության հասնելու միջոց:

Որպես կարեւոր օրենսդրական, վերահսկողական եւ ներկայացուցչական հաստատություններ, խորհրդարաններն անմիջականորեն շահագրգիռ են այս նպատակով (տես ներդիրը, էջ 7):

Նպատակ 10-ը ԿԶՆ-ների ապահովված մեկ այլ կարեւոր բեկում է: Այն ճանաչում է, որ անհավասարությունները սպառնալիք են տնտեսության եւ սոցիալական կապերի համար, եւ հետեւաբար՝ ուղղված է կրճատելու անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև:

Նպատակ 5 (Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին) լրացնում է ԿԶՆ-ների՝ խտրականությունից զերծ հասարակություն կառուցելու տեսլականը: Այն ընդգծում է հնարավորությունների ընդլայնման եւ բռնությունից զերծ ապրելու կարեւորությունը: Նպատակ 5-ը, մասնավորապես, համընկնում է ՄԽՄ-ի եւ ՄԱԶԾ-ի գլխավոր առաջնահերթությունների հետ:

Մեր հասարակությունների եւ տնտեսությունների զարգացումը

խարսխված է կանանց եւ տղամարդկանց, աղջիկների եւ տղաների կողմից ամբողջական եւ հավասար իրավունքների, պարտավորությունների եւ հնարավորությունների իրացման վրա: Մենք պարտավոր ենք վերստին հայտարարել մինչեւ 2030 թվականը գենդերային հավասարության եւ կանանց ու աղջիկների զորացման կենսագործմանը մեր նվիրվածության մասին:[1]

1 «Ժողովրդավարության ծառայեցումը խաղաղությանը եւ կայուն զարգացմանը. Այնպիսի աշխարհի կառուցում, որը ցանկանում են մարդիկ»: Խորհրդարանի ղեկավարների չորրորդ համաշխարհային համաժողովի հռչակագիր, 2015 թ. սեպտեմբերի 2:

Նպատակ 16. Խաղաղություն, արդարություն եւ ուժեղ հաստատություններ. հակիրճ նկարագրություն

Ելնելով Հազարամյակի զարգացման նպատակներից քաղած դասերից՝ ԿԶՆ-ները ներառում են մի առանձին նպատակ՝ «Խթանել խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ»:

Այս նպատակի շրջանակում երկու թիրախները վերաբերում են խորհրդարանների դերին.

- Թիրախ 16.6. Զարգացնել արդյունավետ, հաշվետու և թափանցիկ հաստատություններ բոլոր մակարդակներում
- Թիրախ 16.7. Ապահովել որոշումների կայացման արձագանքող, ներառական, մասնակցային և ներկայացուցչական գործընթաց բոլոր մակարդակներում

Մնացած թիրախները վերաբերում են ժողովրդավարական կառավարման այնպիսի առանցքային սկզբունքների, ինչպիսիք են օրենքի գերակայությունը, արդարադատությունը, տեղեկությունների հասանելիությունը եւ հիմնարար ազատությունները:

Անհրաժեշտ է, որ խորհրդարանները ներգրավվեն ԿԶՆ ողջ շրջանակի իրականացման ու վերահսկողության աշխատանքներում: Սակայն նրանք նաեւ պետք է հատուկ ուշադրություն դարձնեն իրենց սեփական կառուցակարգային զարգացմանը՝ համաձայն Թիրախներ 16.6-ի եւ 16.7-ի: Օրինակ, խորհրդարանները կարող են աշխատել իրենց ազգային վիճակագրական իշխանության հետ՝ մշակելու այնպիսի ցուցիչներ, որոնք կարտացոլեն իրենց սեփական առաջնահերթությունները՝ ի նպաստ Թիրախներ 16.6-ի եւ 16.7-ի:

«Օրակարգ 2030»-ն արտացոլում է զարգացման հայեցակարգի սեւեռակետի փոփոխություն՝ հիմնական կարիքների բավարարումից դեպի մարդու իրավունքների պաշտպանություն: «Զարգացման իրավունքի մասին» 1986 թվականի հռչակագիրը առավելագույն հստակությամբ սահմանում է, որ իրավունքահեն մոտեցումը մարդուն դնում է զարգացմանն ուղղված գործընթացի կենտրոնում: Այն պետություններին կարգում է որպես առաջնային պատասխանատուներ եւ նրանցից պահանջում է իրենց նպաստը բերել մարդու բոլոր իրավունքների իրացմանը: «Զարգացման իրավունքի մասին» հռչակագիրը մարդկանց՝ զարգացման իրավունքը սահմանում է որպես *«մարդու անօտարելի իրավունք, որի ուժով յուրաքանչյուր անձնավորություն եւ բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն մասնակցել, նպաստել եւ օգտվել տնտեսական, սոցիալական, մշակութային եւ քաղաքական զարգացումից, որի պայմաններում մարդու բոլոր*

իրավունքներն ու հիմնարար ազատությունները կարող են լիարժեքորեն իրացվել»:[2]

Այս գլոբալ շրջանակն իրագործելի ազգային քաղաքականությունների վերածելը պահանջելու է միահամուռ ջանքեր: Անհրաժեշտ է լինելու, որ մասնակցի ամբողջ հասարակությունը՝ սկսելով հենց իրենցից՝ մարդկանցից: «Օրակարգ 2030»-ի էական բաղադրիչներից մեկն այն է, որ մարդիկ պետք է ներառվեն գործընթացի յուրաքանչյուր փուլում՝ սկսած քաղաքականությունների մշակման նախնական փուլից՝ մինչեւ իրականացում եւ մշտադիտարկում: Ազգային եւ ենթաազգային օրենսդիր մարմինները պարտավոր են աշխատել ի նպաստ դրա:

2 «Զարգացման իրավունքի մասին» հռչակագիր. www.un.org/documents/ga/res/41/a41r128.htm

«Օրակարգ 2030»-ը փոխլրացնող փաստաթղթեր

«Օրակարգ 2030»-ը սահմանում է կայուն զարգացման մի գլոբալ տեսլական: Ի հավելումն, այն փոխլրացվում է երեք լրացուցիչ միջազգային համաձայնագրերով, որոնք վերաբերում են զարգացմանն ուղղված ֆինանսավորմանը, կլիմայի փոփոխությանն ու աղետների ռիսկերի նվազեցմանը: Միասնաբար դիտարկվելու դեպքում՝ դրանք ապահովում են մի համապարփակ շրջանակ, որն առաջ է մղում կայուն զարգացումը.

- **Ադիս Աբեբայի գործողությունների ծրագիր**.[3] սա Զարգացման նպատակով ֆինանսավորման երրորդ միջազգային համաժողովի արդյունքում ընդունված փաստաթուղթն է (2015 թ. հուլիս): Այն նախատեսում է ռեսուրսների համախմբման մի գլոբալ ծրագիր, որի արժեքը գնահատվում է մի քանի տրիլիոն դոլարի չափով, եւ որը պետք է ուղղվի կայուն զարգացման ֆինանսավորմանը: Դա կարող է իրականացվել զարգացմանն ուղղված համագործակցության, միջազգային հարկման, առեւտրի եւ մի ամբողջ խումբ կանոնակարգերի ու կառուցակարգային բարեփոխումների միջոցով: Ադիս Աբեբայի ծրագիրը համահունչ է ԿԶՆ 17-ին (իրականացման միջոցների կատարելագործում):
- **Փարիզյան համաձայնագիր կլիմայի փոփոխության վերաբերյալ**.[4]պետությունների կառավարություններն այս համաձայնագիրն ընդունել են 2015 թվականին: Այն նպատակաուղղված է գլոբալ մասշտաբով միջին ջերմաստիճանի բարձրացման սահմանափակմանը՝ պահելով այն նախաարդյունաբերական մակարդակները գերազանցող 2 աստիճանից (ըստ Ցելսիուսի) ցածր: Ավելի մեծ աճը կարող է հանգեցնել մարդկային զարգացման վրա աղետալի եւ անշրջելի հետեւանքների: Սույն համաձայնագիրը երկրներից պահանջում է ձեռնարկել արդյունավետ եւ վերստուգելի գործողություններ՝ նվազեցնելու ջերմոցային գազերի արտանետումները, որոնք գլոբալ տաքացման հիմնական մեղավորն են: Այն նաեւ վերաբերում է ԿԶՆ 13-ին (պայքար կլիմայի փոփոխության դեմ):

3 https://sustainabledevelopment.un.org/frameworks/addisababaactionagenda
4 https://sustainabledevelopment.un.org/frameworks/parisagreement

- **Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի գործողությունների ծրագիր**.[5] երկրների առաջնորդներն այս համաձայնագիրը կնքեցին 2015 թվականի մարտին: Այս ծրագիրն արտացոլում է այն փորձը, որը կուտակվել է աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ տարածաշրջանային եւ ազգային մակարդակներում ներդրված ջանքերի շնորհիվ: Այն ճանաչում է, որ աղետները խաթարում են զարգացմանն ուղղված աշխատանքները, որ ռիսկերը պարտադիր պետք է նվազեցվեն եւ կանխարգելվեն, եւ որ վերակառուցումը պետք է կատարվի համաձայն «*կառուցել նախկինից ավելի լավ*» սկզբունքի: Սենդայի գործողությունների ծրագիրը մասնավորապես ճանաչում է խորհրդարանականների դերը հաշվետվականության եւ վերահսկողության իրականացման գործում:[6]

5 https://sustainabledevelopment.un.org/frameworks/sendaiframework

6 Նույն տեղում, **27(e)**. «... խրախուսել ԱՌՆ տեղական եւ ազգային ծրագրերի իրականացման առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունների հասարակական վերահսկումը եւ հաստատութենական բանավեճերը, այդ թվում՝ պատգամավորների եւ համապատասխան այլ պաշտոնյաների կողմից». **27(թ).** «խրախուսել պատգամավորներին աջակցելու աղետների ռիսկի նվազեցման իրականացմանը նոր օրենսդրության մշակման կամ համապատասխան օրենքների վերանայման եւ բյուջետային հատկացումների միջոցով». **48(ը).** «...շարունակեն աջակցել աղետների ռիսկի նվազեցմանն ու ազգային իրավական համակարգի զարգացմանը»:

ԿԶՆ-ների ազգայնացում

ԿԶՆ-ները ձեւակերպվել են մի ընդարձակ, համապարփակ շրջանակի սահմաններում: Դրանք նախատեսված են այն բանի համար, որ օգնեն հղկել եւ համակարգել ազգային քաղաքականությունները (ներառյալ գոյություն ունեցող փաստաթղթերը), որպեսզի դրանք ուղղված լինեն մարդկության համար ընդհանուր տեսլականի կենսագործմանը: Հետեւաբար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր պետություն որոշարկի իր սեփական գերակայությունները եւ տեղայնացնի թիրախներն ու ցուցանիշները, որպեսզի դրանք ուղղորդեն տվյալ երկրում ԿԶՆ-ների իրականացումը:

ԿԶՆ-ների ազգայնացման նպատակով յուրաքանչյուր երկիր պետք է մշակի կամ թարմացնի սեփական զարգացման ազգային ծրագիրը: Տվյալ երկրի կարիքներին համապատասխանեցված նպատակները եւ թիրախները պետք է ամրապնդվեն առաջընթացի տեղայնացված ցուցիչների միջոցով, որոնք հնարավորություն կտան արձանագրել երկրում գրանցված արդյունքները: Քաղաքացիները պարտադիր պետք է անմիջականորեն ներգրավված լինեն այս գործընթացում: Խորհրդարաններն այդ տեսակետից առանցքային դեր ունեն՝ ապահովելու, որ ազգային ԿԶՆ-ներն արտացոլեն առանձնահատուկ տեղական կարիքներն ու որոշակի խմբերին հատուկ հանգամանքները:

ԿԶՆ-ների կենսագործմանն ուղղված քաղաքականությունները պետք է ամբողջական եւ սիներգետիկ ձեւով դիտարկեն մարդկային զարգացման կարիքները, որոնք կարող են լինել սոցիալական, տնտեսական, մշակութային կամ բնապահպանական: Օրինակ, աղքատության դեմ պայքարի (ԿԶՆ 1) քաղաքականությունները չպիտի նեղացվեն եւ սահմանափակվեն ընդամենը եկամուտների ավելացմամբ, որքան էլ որ դա կարեւոր լինի: Փոխարենը, աղքատության նվազեցման քաղաքականությունները պետք է հասցեագրեն հիմնախնդրի բոլոր ասպեկտները, ինչպիսիք են կրթության պակասը, առողջության վատթարացումը եւ սովը: Անհրաժեշտ է, որ նմանատիպ համապարփակ քաղաքականությունները նաեւ համապատասխանեցվեն բնակչության ամենախոցելի եւ անտեսված խմբերի կարիքներին: Հնարավոր է, որ այդ խմբերը հետ են մնում ազգային այնպիսի միջինացված ցուցանիշներից, ինչպիսիք են մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, կյանքի սպասվող տեւողությունը, կրթական ձեռքբերումները եւ քաղաքական կյանքին մասնակցությունը: Համապարփակ եւ սիներգետիկ մոտեցումը հանդիսանում է ամբողջ «Օրակարգ 2030»-ի համար որպես հիմք ընդունված ***«ոչ ոք չպիտի անտեսվի»*** սկզբունքի էությունը:

«Օրակարգ 2030»-ը ներառում է ուղղորդող սկզբունքներ եւ ծրագրային հանգրվաններ՝ առաջընթացի պարբերական վերլուծության համար: ԿԶՆ-ներին հասնելու ուղղությամբ գլոբալ մասշտաբով առաջընթացը գնահատվելու է ըստ փոխհամաձայնեցված ցուցանիշների մի համախմբի:[7] Ընդունելի է, որ պետությունները որդեգրեն ազգային առանձնահատկություններին համահունչ ցուցանիշներ՝ երկրի առաջընթացին հետեւելու նպատակով:

Տվյալների կարեւորությունը

Ապահովելու համար, որ օրենքները, բյուջեները եւ ծրագրերն արդյունավետորեն նպատակաուղղված լինեն ամենակարիքավոր խմբերին, խորհրդարանականները պետք է կարողանան օգտվել մի շարք առանցքային խնդիրների վերաբերյալ տարաբաժանված տվյալներից: Սովորաբար սա իրականացվում է ազգային վիճակագրական մարմինների միջոցով: Խորհրդարանները կարող են օգտագործել բյուջեի հաստատման իրենց լիազորությունը՝ ապահովելու, որպեսզի վիճակագրական մարմիններին հատկացվեն տվյալների հավաքագրման ու վերլուծության համար պատշաճ ռեսուրսներ: Խորհրդարանականները կարող են նաեւ իրենց ընտրազանգվածի ժողովրդագրական հատկանիշների եւ կարիքների սեփական ընկալման միջոցով աջակցել վիճակագիրների՝ տվյալների հավաքագրման ու վերստուգման ջանքերին:

7 Միավորված ազգերի կազմակերպության Վիճակագրական հանձնաժողովի ԿԶՆ ցուցանիշների վերկայքը՝ http://unstats.un.org/sdgs/

Խորհրդարանի ներգրավվածությունը ԿԶՆ-ների իրականացմանը

Որպես խորհրդարանականներ, մենք պարտավոր ենք աջակցություն ցուցաբերել այն ջանքերին, որոնք ուղղված են նոր նպատակների իրագործմանն այնպիսի եղանակներով, որոնք հարգում են յուրաքանչյուր երկրի ազգային առանձնահատկությունները: Մեր պարտավորությունը հստակ է. ապահովել, որ կառավարությունները պատասխանատվություն կրեն այն նպատակներին հասնելու համար, որոնք նրանք ստորագրել են, ինչպես նաեւ հավաստիանալ, որ ընդունվում են նպաստավոր օրենքներ եւ համապատասխան բյուջեներ: ... Մենք ձգտելու ենք հաղթահարել մեկուսացված գործելու մտածելակերպը մեր խորհրդարաններում եւ ազգային իշխանությունների ներսում, որպեսզի արտացոլվի այս նպատակների միջճյուղային բնույթը: Վերոնշյալին հասնելու համար մենք կանենք առավելագույնը, որպեսզի այս նպատակները կառուցակարգային մաս կազմեն յուրաքանչյուր խորհրդարանին, եւ բավարար ժամանակ կհատկացնենք քննարկումների եւ մշտադիտարկման համար:

Հանոյի հռչակագիր. «Կայուն զարգացման նպատակներ. խոսքերի վերածում գործողությունների», ՄԽՄ 132-րդ խորհրդաժողով, Հանոյ, 2015 թ. ապրիլի 1:

ԿԶՆ-ները խորհրդարանականներին տալիս են հնարավորություն՝ ցուցադրելու իրենց հանձնառությունը՝ բարելավելու մարդկանց կյանքը եւ Երկիր մոլորակի առողջությունը, որից կախված է ամբողջ մարդկության գոյությունը: Առավել անմիջականորեն՝ ԿԶՆ-ները հանդիսանում են մի հուսալի շրջանակ, որի շուրջ խորհրդարանները կարող են կառուցել իրենց ռազմավարական ծրագրերը եւ իրականացնել սեփական վերահսկողական եւ հաշվետու լինելու աշխատանքները:

Ներառական գործընթաց

Բազմաթիվ երկրներում ստեղծվելու է ԿԶՆ աշխատանքային խումբ կամ նմանատիպ որեւէ մարմին՝ համակարգելու եւ ուղղորդելու ԿԶՆ իրականացումը: Խորհրդարանի ներկայացուցիչները պետք է ընդգրկվեն այդպիսի ցանկացած բարձր մակարդակի մարմնի կազմում, որպեսզի հնարավորություն ունենան ներկայացնելու իրենց ընտրազանգվածի տեսակետները եւ տրամադրելու ինստիտուցիո-

նալ աջակցություն: Խորհրդարանները պետք է պահանջեն, որ կառավարությունները նախագծեն կամ թարմացնեն ԿԶՆ գործողությունների ազգային ծրագիր (կամ վերաբերելի այլ ոլորտային ծրագրեր): Սա կերաշխավորի, որ ազգային քաղաքականությունները եւ գործողությունների ծրագրերը մշակվեն կամ վերանայվեն, որպեսզի ԿԶՆ-ներին հասնելու գործում իրենց ներդրումը դառնա ավելի արդյունավետ: Խորհրդարաններն ընդգրկուն հանրային քննարկումների միջոցով պետք է ի վիճակի լինեն իրենց նպաստը բերել այդ ծրագրին: Խորհրդարանը պետք է պաշտոնապես ընդունի ԿԶՆ գործողությունների ազգային ծրագիրը՝ համապարփակ վերանայման եւ պաշտոնական բանավեճերի արդյունքում: Վերջապես, խորհրդարանները պետք է կառավարություններից խնդրեն իրենց տրամադրել գործողությունների ազգային ծրագրի իրականացման գործում առաջընթացի վերաբերյալ պարբերական հաշվետվություններ:[8]

Խորհրդարանների մասնակցությունը գլոբալ մասշտաբով առաջընթացի մշտադիտարկմանը

ԿԶՆ-ների կենսագործման հարցում պետությունների կառավարություններն ունեն որոշիչ դեր: Սակայն այս գործընթացն ստանում է նաեւ միջազգային աջակցություն՝ տեղեկությունների տարածման եւ մշտադիտարկման մեխանիզմների միջոցով: Դրանց թվում կարեւորագույններից մեկը Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման բարձր մակարդակի քաղաքական ֆորումն է: Ամեն տարվա հուլիս ամսին պետությունների առաջնորդները հավաքվում են այս Ֆորումին, որպեսզի վերլուծության ենթարկեն գրանցված առաջընթացը եւ վերակարգաբերեն համաշխարհային ջանքերը: Մի շարք երկրներ ամեն տարի անց են կացնում կամավոր ազգային վերանայումներ: Նման վերանայումները պետք է լինեն մասնակցային գործընթացներ, որոնք բաց են շահագրգիռ բոլոր կողմերի, այդ թվում՝ խորհրդարանների համար: Խորհրդարանների ներգրավվածությունը դյուրինացնելու նպատակով՝ ամեն տարի ՄԽՄ առաջին խորհրդաժողովի ընթացքում ՄԽՄ-ն անց է կացնում Միավորված ազգերի կազմակերպության գործերով կոմիտեի հատուկ նիստ:

8 Խորհրդարանների դերը երկրի առաջընթացի վերլուծության գործում մասնավորապես հիշատակված է «Օրակարգ 2030»-ի 79-րդ պարբերությունում, որում ասված է. *Մենք նաեւ անդամ պետություններին խրախուսում ենք իրականացնել ազգային եւ ենթաազգային մակարդակներում երկրի առաջընթացի պարբերական եւ ներառական վերլուծություններ, որոնք կնախաձեռնվեն եւ կղեկավարվեն փվյալ երկրի կողմից: ... Ազգային խորհրդարանները, ինչպես նաեւ այլ կառույցներ նույնպես կարող են աջակցել այս գործընթացներին:*

Խորհրդարանի հիմնական՝ օրենքների ընդունման, բյուջետավորման, վերահսկողության եւ ընտրազանգվածի շահերի ներկայացման դերերը բոլորն էլ վճռական նշանակություն ունեն ԿԶՆ-ների լիարժեք իրականացման տեսակետից:

- **Օրենքների ընդունում**. ԿԶՆ-ների իրականացման համար կարեւորագույն նշանակություն ունի աղքատամետ, գենդերային հարցերի նկատմամբ զգայուն, մարդու իրավունքների վրա հիմնված նպաստավոր իջավայրի ապահովումը: Ապահովելու համար, որ պետությունն իրենը համարի ԿԶՆ-ները եւ լիարժեքորեն ներգրավված լինի, անհրաժեշտ է, որ օրենսդրությունը խթանի հանրության առջեւ հաշվետվականությունը, մասնակցային ձեւով որոշումների կայացումը եւ ներառականությունը: Այս նպատակին հասնելու համար խորհրդարանականները պարտադիր պետք է վերլուծեն իրենց երկրի կառավարության կողմից առաջարկված օրենսդրությունը՝ հավաստիանալու, որ այն արտահայտում է մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները եւ նպաստում է ինչպես ԿԶՆ գործողությունների ազգային ծրագրի, այնպես էլ առավել ընդգրկուն «Օրակարգ 2030»-ի կենսագործմանը:
- **Բյուջետավորում**. ԿԶՆ-ները հաջողությամբ կենսագործելը նշանակում է առավելագույնի հասցնել առկա բոլոր ներպետական ռեսուրսները՝ հնարավոր լավագույն արդյունքներին հասնելու նպատակով: Բյուջեի հաստատման գործընթացում խորհրդարանները պետք է ներգրավվեն այն հարցերում, թե ինչպես են պետական ֆինանսական միջոցները տեղաբաշխվում ազգային մակարդակում սահմանված ԿԶՆ-ների ուղղությամբ, այդ թվում՝ թե արդյոք բավարար ֆինանսական միջոցներ են հասնում ամենախոցելի եւ անտեսված խմբերին: Ինչ վերաբերում է ֆինանսական մուտքերին՝ խորհրդարանները պարտավոր են ապահովել, որ ֆիսկալ եւ այլ տնտեսական քաղաքականությունները, որոնք սահմանվել են բյուջետային գործընթացի շրջանակում, համահունչ են ԿԶՆ գործողությունների ազգային ծրագրին: Պետական բյուջեի միջոցների ծախսերի

խորհրդարանական վերահսկողությունը նույնպես ունի էական նշանակություն: Հենց այդ ընթացքում է, որ խորհրդարանները կարող են վերլուծել ԿԶՆ-ների կենսագործման ուղղությամբ կառավարության կատարած ծախսերի արդյունավետությունը:

- **Վերահսկողություն**. Արդյունքների մշտադիտարկումը ԿԶՆ-ների իրագործման վճռական բաղադրիչներից մեկն է: Խորհրդարանները պետք է հավաստիանան, որ իրականացումն ընթանում է ըստ նախատեսվածի եւ կարող է վերակարգաբերվել՝ ելնելով ապացույցներից եւ հասարակության արձագանքներից: Խորհրդարանական վերահսկողության այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են կառավարության հետ հարցուպատասխանի ժամը, կառավարությանն ուղղվող գրավոր հարցումները, ինչպես նաեւ խորհրդարանական հանձնաժողովներում լսումները կարող են չափազանց արդյունավետ լինել խոչընդոտների վերհանման կամ առաջընթացի գնահատման գործում: Խորհրդարանական հանձնաժողովները պետք է ունենան լիազորություն՝ հրավիրելու գործադիր իշխանության ներկայացուցիչներին, որպեսզի նրանք տրամադրեն տեղեկություններ կառավարության որդեգրած քաղաքականությունների եւ ծրագրերի ազդեցության վերաբերյալ: Հանձնաժողովները նաեւ պետք է ի վիճակի լինեն հրավիրելու հանրային լսումներ՝ ԿԶՆ-ների իրագործման վերաբերյալ քաղաքացիների տեսակետների հավաքագրման նպատակով: Կուտակված գիտելիքը կարող է վերստին օգտագործվել կառավարության կողմից կիրառվող պլանավորման եւ իրականացման մեխանիզմներում՝ ԿԶՆ ազգային աշխատանքային խմբի կամ դրան համարժեք մեկ այլ մարմնի միջոցով, որին մասնակցում են խորհրդարանականները:
- **Ներկայացուցչականություն**. ԿԶՆ-ների իրականացմանն իմաստալից ազգային ներգրավվածության ապահովման նպատակով՝ բոլոր քաղաքացիները եւ շահակիցները պետք է մասնակցեն քաղաքականությունների եւ գերակայությունների սահմանմանը: Որպես քաղաքացիների ընտրված ներկայացուցիչներ՝ խորհրդարանականները կրում են պարտավորություն՝ սեփական ընտրազանգվածի հետ կապ հաստատել ոչ միայն նախընտրական շրջանում, այլեւ իրենց պաշտոնավարման ամբողջ ընթացքում: Անմիջականորեն շփվելով մարդկանց հետ՝ խորհրդարանի անդամները կարող են հատկորոշել ԿԶՆ-ների իրագործման բացերը եւ թերի կողմերը, որոնք կարող են սպրդել կառավարության պատրաստած հաշվետվություններից կամ ազգային վիճակագրությունից: Խորհրդարանականները պետք է տեղյակ լինեն իրենց ընտրազանգվածի ավելի ընդհանուր մտահոգությունների մասին. այդ մտահոգությունների վերհանմանը կարող են օգնել խորհրդակցությունները քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ակադեմիական հաստատությունների, մասնավոր հատվածի եւ այլոց հետ:

Խորհրդարանի պատրաստականության գնահատում. ինչից սկսել

Ինքնագնահատումը, ըստ սահմանման, կամավոր գործողություն է: Այն առավել արդյունավետ է, երբ խորհրդարանը, հատկապես այդ կառույցի բարձր ղեկավարությունը, դա դիտարկում է որպես այդ կառույցը իբրեւ հաստատություն ուժեղացնելու ճանապարհ: Ինքնագնահատումը, ի հակադրություն արտաքին փորձագիտական գնահատման, օգնում է երաշխավորել, որ խորհրդարանը ստանձնի այդ վարժանքի արդյունքների համար պատասխանատվությունը: Ինքնագնահատումները չեն օգտագործվում եւ չպիտի օգտագործվեն՝ խորհրդարաններին դասակարգելու նպատակով: Փոխարենը՝ դրանք օգտակար տեղեկություններ են տրամադրում, որոնք կարող են օգնել՝ բարելավելու խորհրդարանի առանցքային գործառույթների, ներառյալ՝ օրենքների ընդունման, ներկայացուցչականության եւ վերահսկողության կատարողականը: Նպատակը համաձայնության գալն է ընթացիկ իրավիճակի, ապագա գործողությունների առաջնահերթությունների եւ հետագա լավագույն առաջընթացի համար առաջարկությունների վերաբերյալ մեկ ընդհանուր տեսլականի շուրջ:

Ե՞րբ պետք է կատարել ինքնագնահատում ԿԶՆ-ների համատեքստում

ԿԶՆ-ներն ուժի մեջ են մտել 2016 թ. հունվարի 1-ին, եւ դրանց իրականացումն արդեն իսկ ընթացքի մեջ է: Հետեւաբար, օգտակար կլինի հնարավորինս շուտ գնահատել ձեր հաստատութենական գործընթացները եւ ԿԶՆ-ների իրականացման հարցում արդյունքների հասնելու կարողությունները: Դա կապահովի, որ խորհրդարանը գտնվի ԿԶՆ-ների իրականացմանն ուղղված ջանքերի առաջնագծում:

«Օրակարգ 2030»-ը եւ ԿԶՆ շրջանակը պետք է կենսագործվեն համեմատաբար կարճատեւ՝ 15 տարվա ժամանակահատվածում: Կարողությունների եւ կարիքների պարբերական ինքնագնահատումները խորհրդարանականներին հնարավորություն կտան հավաստիանալ, որ իրենց խորհրդարանները ակտիվորեն եւ շարունակաբար նպաստում են ԿԶՆ-ների կենսագործման գործընթացներին: Հնարավորինս վաղ իրականացվող նախնական ինքնագնահատումը կսահմանի ելակետային տվյալները: Հետագա ինքնագնահատումները կարող են իրականացվել յուրաքանչյուր երեքից հինգ տարին մեկ անգամ: Դրանք կարող են վերաբերել արդեն իսկ արձանագրված ձեռքբերումներին եւ անելիքներին, ինչպես նաեւ լավագույն փորձին եւ քաղված դասերին:

Ո՞վ է ներգրավված ինքնագնահատման գործընթացում

Ինքնագնահատման իրականացումը համախմբում է տարատեսակ դերակատարների՝ քննարկելու պատրաստվածության եւ կարողությունների հարցեր: Խորհրդարանականները սեփական պատրաստվածության գլխավոր շահակիցներն ու գնահատողներն են:

Փորձը ցույց է տալիս, որ խորհրդարանական ինքնագնահատումները լինում են ամենից օգտակար, երբ դրանք իրականացվում են խորհրդարանի խոսնակի, որեւէ հանձնաժողովի նախագահի կամ խորհրդարանի այլ բարձրաստիճան պաշտոնյայի ղեկավարության ներքո գործող խմբի կողմից: Գործընթացի ղեկավարումը բարձր մակարդակի պաշտոնյաների կողմից եւ տարբեր ոլորտներում մասնագիտացած խորհրդարանականների ներառումը մեծացնում է հավանականությունը, որ արդյունքները, որպես ամբողջություն, կդառնան ամբողջ խորհրդարանի սեփականությունը:

Ինքնագնահատումը պարզապես ստուգաթերթով իրականացվող վարժություն չէ: Այն մասնավորապես նպատակաուղղված է տարբեր տեսակետներ եւ որակավորումներ ունեցող խորհրդարանականներին համախմբելուն այնպես, որ նրանք կարողանան վերլուծել խորհրդարանի պատրաստականությունը՝ ներգրավվել ԿԶՆ-ների իրականացման գործում: Բազմաշերտ խմբի ձեւավորումը բարձրացնում է ինքնագնահատման գործընթացի՝ որպես կառուցակարգային վարժանքի լեգիտիմությունը:Կատարյալ դեպքում այդ խմբում պետք է ներկայացված լինի ազգային խորհրդարանի եւ ողջ երկրի բազմազանությունը: Խմբում պետք է ներառվեն արական եւ իգական սեռերի խորհրդարանականներ, որոնք ներկայացնում են ինչպես իշխող քաղաքական ուժը, այնպես էլ ընդդիմությունը, ինչպես նաեւ թերներկայացված խմբերի անդամներ, ինչպիսիք են երիտասարդ խորհրդարանականները, փոքրամասնությունների ներկայացուցիչները եւ անձինք աշխարհագրական տարբեր շրջաններից: Եթե խումբն ընդգրկում է տարատեսակ կարծիքներ խորհրդարանից, այդ թվում՝ խորհրդարանի աշխատակազմից, այն ի վիճակի կլինի օգտակար ձեւով վերլուծության ենթարկել ներքին գործընթացները եւ պատրաստվածությունը, ինչն ունի էական նշանակություն կառուցողական արդյունքների հասնելու տեսակետից:

Խորհրդարանները գուցե նաեւ ցանկանան շահագրգիռ այլ կողմերի (ինչպիսիք են քաղաքացիական հասարակության կամ կանանց խմբերը, երիտասարդության ներկայացուցիչները, արհեստակցական միությունները, ակադեմիական հաստատությունները կամ լրատվամիջոցները) հրավիրել մասնակցելու ինքնագնահատման գործընթացին:

Դրանցից յուրաքանչյուրն իր հետ բերում է սեփական ընտրազանգվածից քաղած տարբեր տվյալներ եւ տեսակետներ, որոնք հաճախ կարող են օգնել գործընթացի համար փաստական հիմք ծառայելու եւ այն հարստացնելու առումով: Յուրաքանչյուր խորհրդարան ինքն է ընտրում՝ արդյոք արժե դրսից ներգրավել մասնակիցների, եւ որոշում է, թե ինչպես հարաբերվել նրանց հետ:

Ինչպե՞ս է կազմակերպվում ինքնագնահատումը

ԿԶՆ-ները ամփոփում են զարգացմանն առնչվող խնդիրների մի ընդարձակ շրջանակ եւ ընդգրկում են իրականացման մոտեցումների մի բարդ համակցություն: Հետեւաբար մեծապես խորհուրդ է տրվում, որ ինքնագնահատման ցանկացած վարժության նախորդի ԿԶՆ տեղեկատվական սեմինար: Սեմինարը պետք է խորհրդարանականներին ուղղորդի «Օրակարգ 2030»-ի առանցքային տարրերի, 17 ԿԶՆ-ների եւ դրանց հարակից շրջանակների միջով: Կատարյալ դեպքում այդ սեմինարը կարող է կազմակերպվել կառավարության հետ համատեղ (օրինակ՝ ԿԶՆ-ների հարցերով ազգային կառույցի կամ աշխատանքային խմբի միջոցով, եթե նման մարմին գոյություն ունի): Դա կարող է խորհրդարանականներին հնարավորություն տալ սկսել գործընկերությունների կառուցումը, այդ թվում՝ կառավարությունը ներկայացնող պաշտոնյաների հետ, որոնց հետ նրանք աշխատելու են ԿԶՆ-ների կենսագործմանը զուգահեռ:

ԿԶՆ տեղեկատվական սեմինար կարող է օգտագործվել նաեւ ինքնագնահատման գործընթացի մեկնարկի նպատակով: Այն կարող է ծառայել՝ խորհրդարանականներին ներկայացնելու գործընթացը եւ սկսելու ինքնավերլուծության ժամանակահատվածը, որը ցանկացած ինքնագնահատման հաջողության համար ունի վճռորոշ նշանակություն: Սեմինարը նաեւ լավ հնարավորություն է՝ առանձնացնելու այն խորհրդարանականներին, որոնք հետաքրքրված են վարժանքի կազմակերպմամբ կամ դրանում մասնակցությամբ:

Այն դեպքերում, երբ տվյալ երկրում գործում է երկպալատ խորհրդարան, երկու պալատներն էլ կարող են կամ միասնաբար, կամ առանձին-առանձին անցկացնել ինքնագնահատում: Ընտրությունը կախված կլինի երկու պալատների միջեւ համագործակցության ու աշխատակցության մակարդակից, ինչպես նաեւ ռեսուրսների համատեղ օգտագործման մակարդակից: Համատեղ ինքնագնահատումը երկպալատ խորհրդարանին հնարավորություն կտա որոշարկել ընդհանուր ռազմավարություններ եւ փոխլրացնող գործողություններ: Այդուամենայնիվ, որոշ երկրներում հնարավոր է, որ պալատներից մեկը կամ երկուսն էլ կազմված կամ կազմակերպված չլինեն ըստ կուսակցական պատկանելության (ինչպես այն դեպքերում, երբ դրանք ներկայացնում են ավանդական առաջնորդների կամ նշանակված ավագների):
Հետեւաբար՝ կարող են պահանջվել տարատեսակ մոտեցումներ՝ ապահովելու տարբեր համայնքների տեսակետների ներառական ներկայացվածություն:

Խորհրդարանական ինքնագնահատման վարժանքի նախապատրաստություն

Աջակցություն ղեկավարությունից	Արդյո՞ք նախագահող պաշտոնյան եւ/կամ խորհրդարանի ղեկավար կազմը հավանություն է տվել ինքնագնահատմանը:
Կազմակերպում/ լոգիստիկա	Ո՞վ է նախաձեռնելու եւ կազմակերպելու այդ վարժանքը: Արդյո՞ք գոյություն ունի բազմակուսակցական ղեկավար կազմ, որը կարող է տրամադրել ռազմավարական ուղղորդում: Արդյո՞ք կուսակցականության սկզբունքով չձեւավորված խորհրդարանում գոյություն ունի ներառական ղեկավար կազմ, որը կարող է տրամադրել ռազմավարական ուղղորդում: Արդյո՞ք խորհրդարանի աշխատակազմում գոյություն ունի որեւէ խումբ, որը կարող է կազմակերպել լոգիստիկային վերաբերող հարցերը: Արդյո՞ք առկա են բավարար ռեսուրսներ՝ ինքնագնահատման վարժանքի իրականացման համար:

Խնդիրներ	Որո՞նք են այս վարժանքի խնդիրները: Ինչպե՞ս է խորհրդարանականների եւ այլ մասնակիցների շրջանում ձեւավորվելու ընդհանուր ընկալում այս վարժանքի օգտակարության եւ խնդիրների վերաբերյալ:
Մասնակցություն	Ո՞վ է մասնակցելու այս վարժանքին: Ինչպե՞ս են ընտրվելու մասնակից խորհրդարանականները: Արդյո՞ք բոլոր հետաքրքրված խորհրդարանականները պիտի հրավիրվեն, թե՞ միայն մի ավելի փոքր ներկայացուցչական խումբ: Արդյո՞ք խորհրդարանական չհանդիսացող անձինք մասնակցելու են՝ կամ որպես ակտիվ աջակիցներ, կամ որպես թեմատիկ փորձագետներ: Ինչպե՞ս են ընտրվելու այդ մարդիկ:
Վարողներ	Ինչպե՞ս է վարվելու այս վարժանքը: Արդյո՞ք ամբողջ վարժանքի համար լինելու է մեկ վարող: Ինչպե՞ս է ընտրվելու վարողը, եւ ինչպե՞ս է նրա թեկնածությունը համաձայնեցվելու: Ինչպիսի՞ աջակցության կարիք են ունենալու վարողները: Արդյո՞ք վարողի համար պահանջվելու է ֆինանսավորում, թե՞ հնարավոր է գտնել որեւէ գործընկեր կազմակերպություն, որը կարող է տրամադրել լավ վարողի:

Տվյալների աղբյուրներ	Ինչպիսի՞ տվյալներ են առկա, որոնք կարող են փաստական հիմք ծառայել ինքնագնահատման համար: Արդյո՞ք գոյություն ունեն կառավարության պատրաստած զեկույցներ, որոնք հնարավոր է օգտագործել: Արդյո՞ք գոյություն ունեն խորհրդարանի պատրաստած զեկույցներ, այդ թվում՝ ոլորտային հանձնաժողովներից: Արդյո՞ք գոյություն ունեն վերաբերելի զեկույցներ միջազգային կամ տարածաշրջանային կառույցներից (ներառյալ՝ մարդու իրավունքների պաշտպանության պայմանագրային մարմիններից): Ո՞վ է պատասխանատու լինելու այն տեղեկությունների հավաքագրման ու համեմատման համար, որոնք օգտագործում են խորհրդարանականները:
Գնահատման արդյունքը	Որո՞նք են այս վարժանքից ակնկալվող արդյունքները: Արդյո՞ք որեւէ զեկույց: Արդյո՞ք խորհրդարանի գործողությունների ծրագիր: Թե՞ երկուսն էլ: Արդյո՞ք ԿԶՆ-ների կենսագործման շուրջ համախմբված շահագրգիռ կողմերի նոր/ ամրապնդված ցանց (օրինակ՝ խորհրդարանականներ, ՀԿ-ներ, անկախ հաստատություններ): Արդյո՞ք առանցքային շահակիցների վերհանում: Արդյո՞ք գործընկերությունների ստեղծում: Ո՞վ է պատասխանատու լինելու այս արդյունքների ապահովման համար (օրինակ՝ խորհրդարանի աշխատակազմը, հանձնաժողովները):
Հետագա քայլեր	Ինչպիսի՞ հետագա քայլեր են ակնկալվում: Մինչեւ ո՞ր օրը: Ո՞վ է պատասխանատու լինելու հետագա քայլերի ձեռնարկման համար: Ինչպե՞ս են մշտադիտարկվելու հետագա քայլերը:

Ինքնագնահատման հարցեր

Ինքնագնահատման գործընթաց պետք է սկսել հարցերի այնպիսի համակազմով, որը կարող է օգտագործվել սիստեմատիկ կերպով դիտարկելու քննարկման կարիք ունեցող տարբեր խնդիրներ: Սա միտված է խորհրդարանականներին օգնելու՝ առավելագույն արդյունավետությամբ անդրադառնալ պատրաստականությանը եւ որոշարկելու իրենց առաջնահերթություններն ապագայի համար: Այդուհանդերձ, գոյություն չունի մեկ լուծում կամ հարցերի մեկ համախումբ, որ հարմար կլինի բոլոր ազգային համատեքստերին:

Ստորեւ առաջարկվող հարցերը, հետեւաբար, ունեն կողմնորոշելու նպատակ: Դրանք հիմնված են ինքնագնահատման վարժանքների վրա, որ խորհրդարաններն արդեն իսկ կատարել են: Մաս Ա-ում տեղ գտած հարցերը գլխավորապես միտված են փաստական տեղեկություններ քաղելուն եւ Մաս Բ-ում քննարկումների համար հիմք ապահովելուն, որտեղ հարցերն ավելի սուբյեկտիվ են եւ մասնակիցներին պետք է առաջնորդեն՝ որոշարկելու հետագա գործողությունների առաջնահերթությունները:

Հնարավոր է, որ խորհրդարանները ցանկանան ստորեւ բերված հարցերի մի մասը հարմարեցնել իրենց սեփական ազգային համատեքստին: Պարտադիր չէ, որ նրանք քննարկեն առաջարկվող բոլոր հարցերը, ինչպես նաեւ կարող են նաեւ ավելացնել իրենց սեփական հարցերը:

Հարցերի խումբ 1. Խորհրդարանում ԿԶՆ-ների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացում

Յուրաքանչյուր խորհրդարան պետք է դիտարկի տեղեկատվական սեմինարների եւ կարողությունների զարգացման գործողությունների կազմակերպման հարցը: Դա կապահովի, որ բոլոր խորհրդարանականներն ունենան միեւնույն բազային գիտելիքը «Օրակարգ 2030»-ի, ԿԶՆ-ների եւ դրանց օժանդակ թիրախների վերաբերյալ: Երկարաժամկետ առումով, որոշ խորհրդարաններ օգտակար են համարել կառավարությանը մաս կազմող նախարարությունների եւ փորձագիտական մարմինների (ինչպիսիք են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, միջազգային զարգացման գործընկերները կամ գիտական ոլորտի ներկայացուցիչները) հետ ամուր գործընկերությունների զարգացումը:
Այդ գործընկերությունները խորհրդարանականներին հնարավո-

ություն են տալիս օգտվելու տեխնիկական խորհրդատվությունից, տեղեկատվության ավելի ընդգրկուն աղբյուրներից եւ վերապատրաստման հնարավորություններից:

Մաս Ա. Ելակետային իրավիճակի որոշարկում

- Արդյո՞ք ԿԶՆ-ների վերաբերյալ տեղեկություններն ընդգրկված են ընտրություններից հետո նոր խորհրդարանականների համար նախատեսված ճանաչողական նյութերում եւ ներածական ծրագրերում:

- Արդյո՞ք խորհրդարանականները ստանում են թարմ տեղեկություններ ազգային եւ միջազգային մակարդակներում ԿԶՆ-ների իրականացման հարցերի վերաբերյալ: Որքա՞ն պարբերական են լինում այդ թարմացված տեղեկությունները:

- Արդյո՞ք խորհրդարանականները մասնակցել են ԿԶՆ-ների վերաբերյալ միջազգային եւ տարածաշրջանային միջոցառումների՝ ուղղված նրանց իրազեկության մակարդակի բարձրացմանը:

Նախորդող 12 ամսվա ընթացքում.

- Արդյո՞ք խորհրդարանականները մասնակցել են վերապատրաստման դասընթացների ԿԶՆ-ների վերաբերյալ: Եթե այո, ապա քանի՞ նիստ է անցկացվել, եւ քանի խորհրդարանականի համար (կին եւ տղամարդ):
- Արդյո՞ք կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ կամ իրազեկվածության մակարդակի բարձրացման գործողություններ խորհրդարանի աշխատակազմի համար: Եթե այո, ապա քանի՞ աշխատակցի համար (կին եւ տղամարդ): Ո՞ր ստորաբաժանումներից էին նրանք:

Մաս Բ. Ձեր ջանքերի ազդեցության ինքնուրույն վերլուծություն

- **Արդյո՞ք խորհրդարանականների համար հասանելի է ԿԶՆ-ների իրականացման վերաբերյալ ազգային եւ միջազգային տեղեկատվությունը:**
    - Որքա՞ն արդյունավետ է խորհրդարանական գրադարանը խորհրդարանականներին ԿԶՆ հարցերի վերաբերյալ տեղեկանքներով եւ վերլուծություններով ապահովելու հարցում:
    - Արդյո՞ք խորհրդարանականները պատրաստակամ են քաղաքացիական հասարակության կազմակերպութ-

յունների, վերլուծական կենտրոնների, գիտակրթական հաստատությունների, զարգացման գործընկերների կամ ԿԶՆ այլ փորձագետների կողմից իրազեկման ուղեցույցների ստացման հարցում:

- Արդյո՞ք խորհրդարանը կապ է հաստատել կայուն զարգացման ազգային պատասխանատու մարմնի (օրինակ՝ կայուն զարգացման ազգային խորհուրդ) կամ կառավարական որեւէ այլ մարմնի հետ, որպեսզի նրանք ԿԶՆ-ների վերաբերյալ իրազեկման ճեպազրույց կամ վերապատրաստման դասընթաց անցկացնեն խորհրդարանականների հետ:

- **Արդյո՞ք առկա են մեխանիզմներ կամ կառույցներ, որոնք խորհրդարանականներին հնարավորություն կտան քննարկելու ԿԶՆ-ներին առնչվող հարցեր (օրինակ՝ ԿԶՆ-ների հարցերով խորհրդարանական աշխատանքային խումբ, հանձնախումբ կամ մասնագիտական խումբ): Որքան արդյունավետ են դրանք:**

- **Արդյո՞ք իրականացվել է որեւէ գնահատում նախկինում ՀԶՆ-ների (կամ ավելի ընդհանուր՝ աղքատության հաղթահարման ծրագրերի) իրականացման ջանքերի առավելությունների եւ թերությունների վերաբերյալ: Արդյո՞ք կարող էր խորհրդարանը սա օգտագործել՝ պարզելու լավագույն փորձը եւ քաղված դասերը:**
  - Արդյո՞ք կատարվել է խորհրդարանական այն մեխանիզմների գնահատում, որոնք օգտագործվել են ՀԶՆ-ների հարցում ներգրավվելու համար, ինչպես նաեւ դրանց արդյունավետության գնահատում:

Հարցերի խումբ 2. Ինչպես ԿԶՆ-ները գլոբալ մակարդակից բերել տեղական մակարդակ

«Օրակարգ 2030»-ը եւ ԿԶՆ-ները հաստատվել են որպես գործողությունների համաշխարհային ծրագիր: Բայց հարկ կլինի, որ դրանց իրականացումը հարմարեցվի ազգային առաջնահերթություններին եւ հիմնվի գոյություն ունեցող ազգային ծրագրերի ու ջանքերի վրա: Ոչ բոլոր ԿԶՆ-ները հավասար կարեւորություն կունենան բոլոր երկրներում կամ երկրի բոլոր մարզերում: Գոյություն ունեն 8-10 «թիրախներ», որոնք լրացնում են յուրաքանչյուր ԿԶՆ-ն: Թիրախներն ավելի շատ մանրամասներ են ապահովում այն առանցքային հարցերի վերաբերյալ, որոնք պետք է հասցեագրվեն, եթե ազգային մակարդակում որոշվել է հասնել տվյալ Նպատակին: Նմանապես՝ հնարավոր է, որ բոլոր այս թիրախներին իրականացման նույն առաջնահերթությունը չտրվի:
ԿԶՆ-ները տեղայնացնելու համար հարկ կլինի, որ պլանավորման ազգային գերատեսչությունները վերանայեն եւ վերամշակեն ազգային եւ ոլորտային զարգացման առկա ծրագրերը:
Հնարավոր է հարկ լինի նաեւ, որ երկրները մշակեն ԿԶՆ իրականացման նոր ծրագրեր: Խորհրդարանականները պետք է ներգրավվեն այս գործընթացներում, այդ թվում՝ հարստացնելով իրենց գիտելիքը սեփական ընտրողների առաջնահերթությունների վերաբերյալ:

Մաս Ա. Ելակետային իրավիճակի որոշարկում

- **Արդյոք գոյություն ունի ԿԶՆ-ների իրականացման որեւէ ազգային ծրագիր:** Եթե այո, ապա արդյոք իրար հետ կապակցվել են այդ ծրագիրն ու ոլորտային առկա ծրագրերը (կլիմայական, կրթական, առողջապահական եւ այլն):

- **Արդյոք խորհրդարանը պաշտոնապես հաստատել է ազգային ծրագիրը:**

- **Արդյոք խորհրդարանը կազմակերպել է քննարկումներ (կամ լիագումար նիստով, կամ համապատասխան ոլորտային հանձնաժողովներում) երկրում ԿԶՆ իրականացման վերաբերյալ՝ քննարկելու ազգային առաջնահերթությունները:**

Անցած 12 ամիսներին արդյոք կառավարությունը՝

  - խորհրդարանին ներկայացրել է ԿԶՆ-ների իրականացման վերաբերյալ հաշվետվություններ .

- խորհրդարանին ներկայացրել է նախարարների հայտարարություններ ԿԶՆ-ների իրականացման վերաբերյալ
- տվյալներ է տրամադրել ԿԶՆ թիրախների եւ ցուցանիշների վերաբերյալ: Արդյո՞ք տվյալները տարաբաժանված են ըստ սեռի, տարիքի, աշխարհագրական բաշխվածության եւ այլ վերաբերելի հատկանիշների:

Մաս Բ. Ձեր ջանքերի ազդեցության ինքնուրույն վերլուծություն

- **Որքանո՞վ է խորհրդարանը ներգրավված եղել ԿԶՆ-ների վերաբերյալ գործողությունների ազգային ծրագրի մշակման գործընթացում:**
  - Եթե ԿԶՆ գործողությունների ազգային ծրագիր առկա չէ, կամ արդյոք ընթացիկ կամ ապագա ԿԶՆ կամ ոլորտային պլանավորման գործընթացներ, որոնցում խորհրդարանը պետք է ձգտի ներգրավվել:
  - Ի՞նչ աջակցության կամ տեղեկատվության կարիք կունենան խորհրդարանականները՝ արդյունավետորեն ներգրավվելու համար այսօրինակ պլանավորման գործընթացներում:

- **Որքա՞ն արդյունավետորեն են խորհրդարանն ու կառավարությունը համատեղ աշխատում ԿԶՆ-ների շուրջ:**
  - Կա՞ արդյոք ԿԶՆ համակարգման կամ պլանավորման համար պատասխանատու կառավարական մարմին (նախարարություն, մասնագիտական հանձնախումբ, աշխատանքային խումբ, ստորաբաժանում եւ այլն), որի հետ աշխատում է խորհրդարանը:
  - Որքանո՞վ է կառավարությունը ձգտում խորհրդարանը ներգրավել ԿԶՆ-ների իրականացման գործընթացներում:
  - Արդյո՞ք կան նախադեպեր, երբ խորհրդարանը ներգրավվել է կառավարության՝ կայուն զարգացման հարցերի վերաբերյալ աշխատանքային հանձնախմբերում, ինչից խորհրդարանը կարող է դասեր քաղել:

Հարցերի խումբ 3. ԿԶՆ ներգծումը խորհրդարանական մեխանիզմներում

ԿԶՆ-ները կայուն զարգացման բազմաոլորտային, համընդգրկուն շրջանակ են: «Օրակարգ 2030»-ն իր ամբողջությամբ, որի իրականացմանն են ծառայում ԿԶՆ-ները, խորհրդարանականներից կպահանջի գործողություններ ձեռնարկել տարբեր ոլորտների քաղաքականությունների մի շարք հարցերի վերաբերյալ եւ հաղթահարել ինստիտուցիոնալ մեկուսացվածությունը: Այս մեկուսացվածությունը հաճախ առկա է կառավարության ներսում եւ միտում ունեն կրկնորդվելու, երբ խորհրդարանը վերահսկում է կառավարությանը: Երբեմն առանձին խորհրդարանական հանձնաժողովներին է տրվում ԿԶՆ հարցերի վերահսկման միանձնյա պատասխանատվությունը, փոխանակ ԿԶՆ իրականացման եւ վերահսկման գործընթացը ներգծելու խորհրդարանի գործընթացների եւ մեխանիզմների ամբողջության մեջ: Օգտակար է համակարգային կերպով վերանայել խորհրդարանի գոյություն ունեցող մեխանիզմները: Սա հնարավորություն է տալիս խորհրդարանականներին որոշարկել, թե արդյոք այս մեխանիզմները կարող են օգտագործվել՝ աջակցելու ԿԶՆ իրականացմանն ու վերահսկմանը, եւ այնուհետ դիտարկելու, թե արդյոք արժե ստեղծել ինչ-որ նոր գործընթացներ կամ մեխանիզմներ:[9]

Մաս Ա. Ելակետային իրավիճակի որոշարկում

- **Արդյո՞ք խորհրդարանը պաշտոնապես հաստատել է «Օրակարգ 2030»-ը եւ դրանով սահմանված ԿԶՆ-ները (գուցե գրավոր հայտարարության կամ բանաձեւի միջոցով):[10]**

- **Արդյո՞ք խորհրդարանն ունի ինստիտուցիոնալ ծրագիր, որը պատշաճ ձեւով սահմանում է ԿԶՆ իրականացմանը եւ մշտադիտարկմանն աջակցելու հետ կապված սեփական առաջնահերթությունները:**

- **Արդյո՞ք խորհրդարանը հստակորեն բաշխել է ԿԶՆ-ների համար պատասխանատվությունն իր սեփական կառուցվածքում:**
    - Արդյո՞ք խորհրդարանը ԿԶՆ-ների վերաբերյալ

9 Այսպիսի մեխանիզմների օրինակներ են ԿԶՆ (ենթա)հանձնաժողովների ստեղծումը, ԿԶՆ-ների ներգծումը բոլոր հանձնաժողովներում, բոլոր հանձնաժողովների նախագահներից բաղկացած աշխատանքային խմբի ստեղծումը՝ ապահովելու, որ ԿԶՆ հարցերը ներգծվեն հանձնաժողովներում եւ դրանց միջեւ, ավելի ոչ ֆորմալ մեխանիզմի ստեղծումը՝ դյուրացնելու ԿԶՆ-ների իրականացման վերաբերյալ տեղեկությունների կանոնավոր փոխանակումը հանձնաժողովների միջեւ, եւ հանձնաժողովներում փորձագետների համար լսումների կազմակերպումը:

10 ՄԽՄ գործադիր կոմիտեի կողմից ՄԽՄ 133-րդ խորհրդաժողովին ընդունված մոդելային մի բանաձեւի կարելի է ծանոթանալ այստեղ՝ http://www.ipu.org/un-e/ model_SDG.pdf

աշխատանքը համակարգելու պարտականությունը հանձնել է արդեն գոյություն ունեցող խորհրդարանական որեւէ մարմնի կամ կառույցի: Եթե այո, ապա որին:

- Արդյոք ԿՀՆ-ները ներառվել են մեկ կամ մի քանի հանձնաժողովի պաշտոնական մանդատում: Եթե այո, ապա ո՞ր հանձնաժողով(ներ)ի:
- Արդյոք խորհրդարանը ստեղծել է հանձնաժողով՝ նվիրված ԿՀՆ-ներին:
- Կա՞ն, արդյոք, ոչ ֆորմալ բազմակուսակցական մեխանիզմներ, որոնց սեւեռակետում ԿՀՆ-ներն են (օրինակ՝ հանձնախմբեր, շահագրգիռ խմբեր):

Նախորդող 12 ամսվա ընթացքում.

- քանի՞ լիագումար քննարկում է խորհրդարանն ունեցել ԿՀՆ-ների վերաբերյալ.
- ո՞ր հանձնաժողովներն են քննարկել ԿՀՆ-ները.
- ԿՀՆ-ների վերաբերյալ քանի՞ զեկույց է հրապարակվել հանձնաժողովների կողմից:

Մաս Բ. Ձեր ջանքերի ազդեցության ինքնուրույն վերլուծություն

- **Արդյոք պալատներից յուրաքանչյուրի խորհրդարանական հանձնաժողովները քննարկել են, թե ինչպես արդյունավետորեն ներգրավվել ԿՀՆ-ների իրականացման հարցում:**[11]

  - Արդյոք խորհրդարանական յուրաքանչյուր հանձնաժողով քննարկում է ունեցել ԿՀՆ-ների վերաբերյալ՝ իր գործունեության ոլորտի շրջանակում:[12]
  - Արդյոք խորհրդարանական յուրաքանչյուր հանձնաժողով որոշարկել է, թե որ Նպատակների ու թիրախների հարցում իրենք պետք է ներգրավվեն եւ ինչու: Եթե այո, ապա ի՞նչ պետք է արվի՝ զորացնելու այդ հանձնաժողով(ներ)ը, որպեսզի դրանք ստանձնեն ԿՀՆ վերահսկման դեր:
  - Արդյոք երկու պալատների տարբեր հանձնաժողովները քննարկել են, թե արդյոք իրենք կարող են միասին աշխատել ԿՀՆ վերահսկման ուղղությամբ, եւ ինչպես:

11 Սա պետք է ներառի դիտարկելը, թե արդյոք խորհրդարանական հանձնաժողովները կարող են վերահսկել կայուն զարգացման ազգային որեւէ ծրագրի կամ համապատասխան ոլորտային ծրագրերի իրականացումը, եւ ինչպես:

12 Օրինակ՝ շատ խորհրդարաններ ունեն սոցիալական ապահովության հանձնաժողով, որը կարող է օգտագործվել՝ վերահսկելու առողջությանը, կրթությանը եւ աղքատության հաղթահարմանը վերաբերող ԿՀՆ-ների իրականացումը, կամ իրավական հարցերի եւ արդարադատության հանձնաժողով, որը կարող է օգտագործվել՝ հետեւելու ներառական հաստատությունների, խաղաղության եւ արդարադատության հասանելիության վերաբերյալ ԿՀՆ 16-ի ուղղությամբ առաջընթացին:

- Արդյո՞ք հանձնաժողովներն ունեն աշխատանքային պլան, որն արտացոլում է ԿՀՆ գործողությունները:

- **Որքա՞ն արդյունավետորեն են խորհրդարանական հանձնաժողովները ներգրավում կառավարությանը ԿՀՆ-ների իրականացման հարցում:**
    - Արդյո՞ք խորհրդարանական հանձնաժողովները համապատասխան նախարարություններին խնդրում են մասնակցել հանձնաժողովի լսումներին եւ թարմ տեղեկություններ հաղորդել ԿՀՆ ազգային ռազմավարության կամ ծրագրի առաջընթացի վերաբերյալ:
    - Կարո՞ղ են արդյոք խորհրդարանական հանձնաժողովներն ուսումնասիրություններ նախաձեռնել առ այն, թե որքան հաջողությամբ են իրականացվում ԿՀ նպատակները:

- **Որքա՞ն արդյունավետորեն են խորհրդարանական հանձնաժողովները ԿՀՆ իրականացմանն աջակցելու գործում ներգրավում քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, գիտակրթական ոլորտին, միջազգային զարգացման գործընկերներին կամ առանցքային այլ շահագրգիռ կողմերի:**
    - Արդյո՞ք խորհրդարանական հանձնաժողովներն այս խմբերին հրավիրում են մասնակցելու հանրային լսումներին եւ/կամ փաստեր ներկայացնելու ԿՀՆ իրականացման գործում իրենց ներգրավվածության վերաբերյալ:
    - Արդյո՞ք խորհրդարանական հանձնաժողովները եւ/կամ նրանց աշխատակազմերը դիմում են նման խմբերի՝ ԿՀՆ հարցերի վերաբերյալ հանձնաժողովներին տեղեկանքներ եւ/կամ տեխնիկական խորհրդատվություն տրամադրելու:

11

- **Որքանո՞վ են ԿԶՆ-ները հաջողությամբ ներգծվել խորհրդարանի գործունեության մեջ: Ինչպիսի՞ ճշգրտումներ է անհրաժեշտ կատարել (եթե կա նման անհրաժեշտություն) խորհրդարանի կառույցներում եւ աշխատանքային մեթոդներում, որպեսզի այն հնարավորություն ստանա ավելի արդյունավետորեն աշխատելու ԿԶՆ-ների ուղղությամբ:**

- **Արդյո՞ք խորհրդարանի աշխատակազմն ապահովված է պատշաճ անձնակազմով եւ ռեսուրսներով՝ աջակցության ծառայություններ տրամադրելու խորհրդարանականներին եւ հանձնաժողովներին՝ ԿԶՆ ուղղությամբ նրանց գործունեության առնչությամբ:**

Հարցերի խումբ 4. Օրենքների ընդունում՝ ի նպաստ ԿՀՆ-ների

Խորհրդարանն առանցքային դեր է խաղալու ԿՀՆ-ների իրականացմանն աջակցելու հարցում՝ ստեղծելով այնպիսի օրենսդրական շրջանակ, որը պայմաններ կապահովի այս նպատակներին հասնելու համար: Սա կնշանակի աղքատամետ, գենդերային խնդիրների նկատմամբ զգայուն, մարդու իրավունքների վրա հենված օրենսդրության ստեղծում: Չափազանց կարեւոր է, որ խորհրդարանն առաջարկվող ողջ օրենսդրությունը վերանայի մարդու իրավունքների վրա հիմնված եւ կայուն զարգացման պրիզմայով: Այդպիսով այն կկարողանա որոշարկել, թե արդյոք տվյալ օրենքը խթանում է կամ կարող է լրամշակվել այնպես, որ խթանի ԿՀՆ ավելի արդյունավետ իրականացումը, եւ ինչպես: Այդ անելիս խորհրդարանը պետք է նախաձեռնողական լինի հանրության մասնակցությունը օրինաստեղծ գործընթացում խթանելու հարցում: Հանրության մասնակցությունը պետք է ներառի օրենքի նախագծերի վերաբերյալ հանրային լսումների անցկացում եւ քաղաքացիական հասարակությանն ու հանրության ներկայացուցիչներին ուղղված հրավեր՝ առաջարկներ ներկայացնելու:

Մաս Ա. Ելակետային իրավիճակի որոշարկում

- **Արդյո՞ք իրականցվել է որեւէ վերանայում՝ պարզելու, թե օրենսդրական ինչպիսի բարեփոխումներ են անհրաժեշտ ԿՀՆ-ների իրականացմանն աջակցելու համար:**
    - Արդյո՞ք օրենքի նախագծերին կից ներկայացվում է ԿՀՆ-ների իրականացման վրա դրանց ազդեցության գնահատում:
    - Արդյո՞ք օրինագծերի հետ միասին սեղանին է դրվում բացատրական հուշագիր, որը սահմանում է առաջարկվող օրենքի ազդեցությունը համապատասխան ԿՀՆ-ների վրա:
      Արդյո՞ք օրինագիծը ներկայացնող նախարարն իր խոսքում սովորաբար բացատրում է, թե արդյոք առաջարկվող օրենքը նպաստելու է ԿՀՆ-ների իրականացմանը, եւ եթե այո, ապա ինչպես:

Նախորդող 12 ամսվա ընթացքում.

- քանի՞ օրենք է պարունակել կոնկրետ անդրադարձ ԿՀՆ-ներին.
- առաջարկվող լրամշակումներից քանիսո՞ւմ է կոնկրետ անդրադարձ եղել ԿՀՆ-ներին: Այս փոփոխությունների նախագծերից քանի՞սն են ընդունվել:

- **Որքա՞ն արդյունավետորեն են հանձնաժողովները վերանայում օրենքի նախագծերը հանձնաժողովների մասնակցային եւ բաց գործընթացների միջոցով՝ ապահովելու, որ դրանք աջակցեն ԿՀՆ-ների իրականացմանը:**
    - Արդյո՞ք խորհրդարանական հանձնաժողովները ներգրավում են հանրությանը՝ օգտվելու իրական կյանքում ԿՀՆ-ների իրականացման հարցերի վերաբերյալ նրանց տեսակետներից:
    - Արդյո՞ք խորհրդարանական հանձնաժողովները կոչ են անում արտաքին փորձագետներին առաջարկներ ներկայացնել ԿՀՆ-ների իրականացման վերաբերյալ (այդ թվում՝ թե ինչն է գործող, ինչը՝ ոչ):

- **Որքանո՞վ հանձնաժողովները կամ նման մարմինները կարող են իրականացնել օրենքի նախագծերի «ազդեցության գնահատում»[13] ԿՀՆ-ների տեսանկյունից:**
    - Կա՞, արդյոք, առաջարկվող օրենքների գենդերային ազդեցությունը գնահատելու գործընթաց:
    - Կա՞, արդյոք, առաջարկվող օրենքների՝ մարդու իրավունքների առումով ազդեցությունը գնահատելու եւ ինչպես վավերացված մարդու իրավունքների կոնվենցիաներին, այնպես էլ ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների կողմից արված համապատասխան առաջարկություններին դրանց համապատասխանությունը ապահովելու գործընթաց:

- **Որքա՞ն արդյունավետ է խորհրդարանին տրամադրված աջակցությունը:**
    - Անձնակազմի համալրվածության ներկա մակարդակը խորհրդարանականներին եւ հանձնաժողովներին հնարավորություն տալի՞ս է ապահովված լինելու օրենսդրական հետազոտություններով, ԿՀՆ ազդեցության վերլուծությամբ եւ այլ անհրաժեշտ աջակցությամբ:
    - Ի՞նչ գործիքների կամ տեղեկությունների կարիք ունի խորհրդարանը, որ կարողանա օրենսդրական գործընթացում ավելի արդյունավետորեն հաշվի առնել ԿՀՆ-ները:

13 Նախագծվել է սոցիալ-տնտեսական ազդեցության գործիք՝ խորհրդարանին հնարավորություն տալու գնահատել առաջարկվող օրինագծի ազդեցությունը սոցիալական, մշակութային, գենդերային, բնապահպանական, մարդու իրավունքների, աղքատության եւ տնտեսական առումներով: Այն սովորաբար իրականացվում է խորհրդարանական աշխատակազմի անձնակազմի կողմից, որն այնուհետ տրամադրում են այն խորհրդարանականներին՝ հաշվի առնելու որպես տեղեկատու փաստաթուղթ:

Հարցերի խումբ 5. ԿԶՆ-ների ֆինանսավորում

Խորհրդարանն ընդունում պետական բյուջեներն ու վերահսկում ծախսերը՝ ապահովելու պետական միջոցների պատշաճ եւ արդյունավետ օգտագործումը: Այս դերում խորհրդարանները կարող են օգտագործել իրենց օրինաստեղծ եւ վերահսկողական իշխանությունը՝ կառավարության ուշադրությունը կենտրոնացնելու աղքատամետ, գենդերային հարցերի նկատմամբ զգայուն, մարդու իրավունքների վրա հիմնված բյուջեների վրա, որոնք աջակցում են ԿԶՆ իրականացմանը:

Մաս Ա. Ելակետային իրավիճակի որոշարկում

- **Արդյո՞ք ամենավերջին բյուջեի առաջարկում նկարագրվում էր, թե ինչպես է այն հաշվի առնում ԿԶՆ-ները: Արդյո՞ք խորհրդարանը կառավարությունից պահանջում է այդպես վարվել:**

- **Արդյո՞ք բյուջեով առանձին միջոցներ են հատկացվում ԿԶՆ-ների իրականացմանը: Եթե այո, ապա բյուջեի քանի՞ տոկոսն է հատկացվում եւ ինչ նպատակով:**

- **Արդյո՞ք երկիրը ստանում կամ տրամադրում է միջազգային զարգացման ֆինանսավորում՝ աջակցելու ԿԶՆ-ների իրականացմանը:**

- **Արդյո՞ք բյուջետային եւ ֆինանսական հարցերի հանձնաժողովների տեխնիկական առաջադրանքը պահանջում է հաշվի առնել ԿԶՆ իրականացումը որպես իրենց վերահսկողական գործողությունների մի մաս:**

- **Խորհրդարանի աշխատակազմում կա՞ արդյոք բյուջեին վերաբերող գրասենյակ կամ ստորաբաժանում, որն ունի կարողություն՝ աջակցելու խորհրդարանական հանձնաժողովներին բյուջեի նախագծերն ու բյուջեի փաստացի ծախսերը գնահատելու հարցում՝ հաշվի առնելով ԿԶՆ-ները:**

Նախորդող 12 ամսվա ընթացքում.

- ԿԶՆ-ների վերաբերյալ քանի՞ հաշվետվություն է խորհրդարանին ներկայացրել երկրի բարձրագույն վերահսկողական հաստատությունը կամ համանման մարմինը.
- համապատասխան հանձնաժողովի քանի՞ հաշվետվութ-

յան մեջ է կոնկրետ անդրադարձ եղել ԿՀՆ-ների հետ կապված միջոցներ հատկացնելուն կամ ծախսերին:

Մաս Բ. Ձեր ջանքերի ազդեցության ինքնուրույն վերլուծություն

- **Բյուջեն քննարկելիս եւ ընդունելիս խորհրդարանը որքանո՞վ է հաշվի առնում ԿՀՆ-ները:**
    - Արդյո՞ք խորհրդարանն ունի գործուն իշխանություն՝ կառավարությանն առաջարկելու փոփոխություններ եւ լրացումներ կատարել բյուջեն իր եզրակացությունների լույսի ներքո ուղղակիորեն լրամշակելու նպատակով:
- **Որքա՞ն արդյունավետորեն կարող է խորհրդարանը ուսումնասիրել բյուջեի ծախսերը եւ գնահատել, թե ինչպես են դրանք ծառայել ԿՀՆ-ների իրականացման առաջխ**աղացմանը:
    - ԿՀՆ-ների կենսագործմանը բյուջետային սուղ աջակցության պարագայում՝ արդյո՞ք խորհրդարանը կամ դրա հանձնաժողովները ունեն լիազորություն՝ կառավարությունից քայլեր պահանջելու իրավիճակը շտկելու ուղղությամբ:
- **Որքա՞ն արդյունավետորեն է խորհրդարանը ներգրավված ԿՀՆ-ների աջակցությանն ուղղված միջազգային զարգացման ֆինանսավորման վերահսկման գ**ործում:
    - Արդյո՞ք օտարերկրյա օգնությունը ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր աղբյուրներից (ՀԿ-ներ, հիմնադրամներ եւ այլն) պատշաճ կերպով հաշվառվում է պետական բյուջեում: Ինչպե՞ս է կատարվում այս ֆինանսական միջոցների վերահսկողությունը:
    - Կա՞, արդյոք, ազգային զարգացմանն ուղղված համագործակցության ծրագիր (ընդունված է անվանել նաեւ «օգնության քաղաքականություն»): Արդյո՞ք կառավարությունը խորհրդարանին հաշվետվություն է ներկայացնում այդ ծրագրի իրականացման վերաբերյալ:
    - Արդյո՞ք միջազգային վարկերի կամ միջազգային զարգացման գործընկերների հետ համաձայնագրերի համար պահանջվում է խորհրդարանի վավերացումը կամ տվյալ պալատի քննարկմանը ներկայացնելը:
- **Արդյո՞ք բյուջետային գրասենյակը կամ խորհրդարանի աշխատակազմն ունեն կարողություն՝ կատարելու բյուջեի գենդերային աուդիտ կամ բյուջեի վերլուծություն մարդու իրավունքների տեսանկյունից:**
    - Եթե ոչ, ապա ինչ հավելյալ աջակցություն է հարկա-

վոր այսօրինակ աուդիտներ կամ վերլուծություններ կատարելու համար:

- Կա՞ն քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, որոնց հետ խորհրդարանը կարող է գործակցել՝ իրականացնելու այդ աուդիտները կամ վերլուծությունները:

Հարցերի խումբ 6. ԿԶՆ-ների իրագործման մշտադիտարկում

ԿԶՆ-ները հարկ կլինի ուշադրությամբ մշտադիտարկել ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային մակարդակում: Գլոբալ մակարդակում կներկայացվեն պարբերական զեկույցներ՝ հետեւելու երկրներում առաջընթացին: Ազգային մակարդակում մոնիտորինգը կկապվի ԿԶՆ շրջանակի հետ ներդաշնակեցված ազգային քաղաքականությունների եւ ծրագրերի իրականացման համար հաշվետվականության հետ: ԿԶՆ-ներում իրավունքների վրա հիմնված մոտեցման որդեգրումը հանգեցրել է որակյալ արդյունքների եւ բաշխման հարցերի ավելի մեծ շեշտադրման: Այս նոր միջոցառումների հետ կապված մոնիտորինգային մարտահրավերները, հետեւաբար, պետք է հասցեագրվեն որպես առաջնահերթություն: Տվյալների հավաքագրումը եւ վերլուծությունը վճռորոշ կլինեն: Դա կպահանջի ազգային հիմնավոր կարողություններ տվյալների հավաքագրման եւ տարաբաժանման ասպարեզում, այդ թվում՝ ըստ սեռի, տարիքի, փոքրամասնությունների եւ առողջական վիճակի:

Մաս Ա. Ելակետային իրավիճակի որոշարկում

- **Արդյոք երկիրը պատրաստել է ԿԶՆ-ների իրականացման հարցում իր առաջընթացի վերաբերյալ ազգային զեկույց:**

- **Արդյոք երկիրը մասնակցել է Բարձր մակարդակի քաղաքական ֆորումի (HLPF) դիտարկման մեխանիզմներին եւ ստացել միջազգային հանձնարարականներ՝ ԿԶՆ իրականացման հետագա քայլերի վերաբերյալ:**

Նախորդող 12 ամսվա ընթացքում.

- հանձնաժողովի քանի՞ լսում է նվիրվել ԿԶՆ-ներին.
- խորհրդարանական քանի՞ հարցի ձեւակերպման մեջ է կոնկրետ անդրադարձ եղել ԿԶՆ-ներին.
- ԿԶՆ-ներին առնչվող քանի՞ հարցում է արվել:

Մաս Բ. Ձեր ջանքերի ազդեցության ինքնուրույն վերլուծություն

- **Որքանո՞վ է խորհրդարանը դիտարկում, քննարկում եւ քայլեր ձեռնարկում կառավարության կողմից մշակվող առաջընթացի զեկույցների վերաբերյալ՝ նվիրված ԿԶՆ-ների իրականացմանը եւ/կամ կայուն զարգացման նպատակներին:**
  - Արդյո՞ք խորհրդարանը մասնակցել է առաջընթացի որեւէ զեկույցի նախապատրաստմանը:

- Արդյո՞ք այս զեկույցները հղվել են խորհրդարանական որեւէ հանձնաժողովի՝ հավելյալ քննարկման համար:
- Ինչպե՞ս են կայուն զարգացման եւ ԿԶՆ-ներին առնչվող հարցերի վերաբերյալ խորհրդարանական առաջարկությունները վերադառնում որպես կառավարության կողմից ձեռնարկված քաղաքականության գործընթացներ:

- **Որքանո՞վ է խորհրդարանն ի վիճակի ապահովել ԿԶՆ իրականացման վերաբերյալ համաշխարհային մարմինների, մասնավորապես՝ Բարձր մակարդակի քաղաքական ֆորումի առաջարկությունների հետագա իրագործում:**[14]
  - Արդյո՞ք մոնիտորինգի միջազգային մեխանիզմներին ներկայացվող զեկույցները ներկայացվում եւ քննարկվում են խորհրդարանի լիագումար նիստերում:
  - Արդյո՞ք այս զեկույցները ուղարկվում են խորհրդարանի հանձնաժողովներին ավելի մանրակրկիտ դիտարկման համար (օրինակ՝ արտաքին հարաբերությունների կամ համապատասխան ոլորտային հանձնաժողովին):
  - Երբ միջազգային մարմիններն առաջարկություններ են ներկայացնում կառավարությանը ԿԶՆ իրականացման վերաբերյալ, արդյո՞ք դրանք ներկայացվում են խորհրդարանին դիտարկման, քննարկման կամ գործողությունների համար:

- **Որքանո՞վ խորհրդարանը կարող է նախաձեռնել եւ իրականացնել իր սեփական ուսումնասիրությունները ԿԶՆ իրականացմանը հարցերի վերաբերյալ:**
  - Արդյո՞ք ուսումնասիրություններ/վերստուգում նախաձեռնելու լիազորությունը սովորաբար օգտագործվում է՝ քննության առնելու կառավարության կողմից ԿԶՆ առնչվող ծրագրերի ու քաղաքականությունների իրականացման շուրջ հարցեր:
  - Արդյո՞ք խորհրդարանական այսօրինակ ուսումնասիրությունները բաց կերպով ներգրավում են հանրային կամ արտաքին փորձագետների՝ օգտվելու իրական կյանքում ԿԶՆ իրականացման հարցերի վերաբերյալ նրանց արձագանքներից:
  - Արդյո՞ք պաշտոնական զեկույցներ են պատրաստվում

14 Կառավարություններից կպահանջվի պարբերաբար հաշվետվություն ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական եւ սոցիալական խորհրդի (ECOSOC) Բարձր մակարդակի քաղաքական ֆորումին, որը պատասխանատու է ԿԶՆ իրականացման ընդհանուր վերահսկման համար: Տես https://sustainabledevelopment.un.org/hlpf

այսօրինակ ուսումնասիրությունների ավարտից հետո: Եթե այո, ապա կամ պահանջ հանրայնացնելու այդ զեկույցները: Արդյոք իրականում հանրայնացվում են զեկույցները (օրինակ՝ խորհրդարանի գրադարանում կամ խորհրդարանի կայքում):

- Որքան արդյունավետորեն է խորհրդարանը կարողանում կառավարությանը եւ/կամ ԿԶՆ-ների գծով պատասխանատու անձանց/մարմիններին մղել հաշվի առնելու այս ուսումնասիրությունների առաջարկությունները:

- **Որքանով արդյունավետ է կառավարության զարգացման քաղաքականության մոնիտորինգը խորհրդարանի կողմից՝ լինի որպես «դոնոր», թե արտերկրից զարգացման աջակցության «ստացող»:**
  - Արդյոք խորհրդարանին ներկայացվում են արտերկրից զարգացմանն ուղղված աջակցության ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ կամ ստացականներ՝ դիտարկելու լիագումար կամ հանձնաժողովի նիստին:

- **Որքան արդյունավետ է միջազգային զարգացման գործընկերների (օրինակ՝ երկկողմ դոնորների, տարածաշրջանային մարմինների եւ բազմակողմ կազմակերպությունների) հետ կառավարության փոխգործունեության մշտադիտարկումը խորհրդարանի կողմից:**
  - Արդյոք կառավարությունից պահանջվում է խորհրդարանին ներկայացնել միջազգային զարգացման գործընկերների կողմից աջակցվող ծրագրերի, նախագծերի եւ գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն:
  - Արդյոք միջազգային զարգացման գործընկերները հրավիրվում են խորհրդարանին կամ վերջինիս հանձնաժողովներին տեղեկացնելու ԿԶՆ հետ կապված հարցերի վերաբերյալ:

Հարցերի խումբ 7. Հասարակության ներգրավում

ԿՀՆ-ները դարձնել մարդակենտրոն՝ նշանակում է, որ բնակչության բոլոր շերտերը ներկայացնող մարդիկ պետք է իրավունք ունենան արտահայտվել իրենց վրա ազդեցություն ունեցող իրավական եւ քաղաքականության գործընթացների վերաբերյալ: Դա նաեւ նշանակում է, որ նրանք պետք է կարողանան թե կառավարության, թե խորհրդարանի որոշում կայացնողներից պահանջել շտկող գործողություններ: Տեղեկատվական տեխնոլոգիաների էքսպոնենցիալ աճը հանգեցնում է նոր եղանակների, որոնցով մարդիկ կարող են մասնակցել զարգացման պլանավորման, բյուջետավորման, իրականացման եւ մոնիտորինգի գործընթացներին: Միեւնույն ժամանակ, դեռեւս զգալի տեղ կա ամրապնդելու խորհրդարանական գործընթացներում քաղաքացիների մասնակցության ավանդական մեթոդները: Կարեւոր է, որ խորհրդարանը նախաձեռնողական կերպով ներգրավի հանրությանը՝ թե՛ բացահայտելու ԿՀՆ-ների հետ կապված հանրության առաջնահերթությունները, թե՛ գնահատելու տեղային մակարդակում ԿՀՆ իրականացումը:

Մաս Ա. Ելակետային իրավիճակի որոշարկում

- **Կա՞, արդյոք, համապետական հանրային քարոզարշավ ԿՀՆ-ների վերաբերյալ: Արդյո՞ք խորհրդարանը մասնակից է դրան:**

- **Արդյո՞ք խորհրդարանը պարբերական հանրային խորհրդակցություններ է անցկացնում ԿՀՆ-ների վերաբերյալ: Արդյո՞ք այն ունի ազատորեն հասանելի առցանց հարթակ՝ հանրությանը ԿՀՆ-ների հարցում ներգրավելու համար:**

Նախորդող 12 ամսվա ընթացքում.

- ԿՀՆ-ների վերաբերյալ քանի՞ հանրային միջոցառում է կազմակերպվել խորհրդարանում կամ խորհրդարանի կողմից.
- իրազեկման միջոցառումներից կամ ընտրողների հետ հանդիպումներից քանիսի՞ առանցքում են եղել ԿՀՆ-ները:

Մաս Բ. Ձեր ջանքերի ազդեցության ինքնուրույն վերլուծություն

- **Որքանո՞վ արդյունավետ է խորհրդարանը հաղորդակցվում հանրության հետ ԿՀՆ-ների իրականացմանն աջակցող իր աշխատանքի վերաբերյալ:**
  - Արդյո՞ք խորհրդարանն ունի հաղորդակցության ռազ-

մավարություն, որը ներառում է հանրությանը ԿՀՆ-ների հարցերը հասցնելու գործողությունները:

- Արդյոք խորհրդարանի կայքը հնարավորություն տալիս է հեշտորեն հայտնաբերել օրենսդիր մարմնի՝ ԿՀՆ-ներին առնչվող գործողությունները:
- Արդյոք խորհրդարանն օգտագործում է սոցիալական մեդիան՝ հաղորդակցելու ԿՀՆ-ներին վերաբերող իր աշխատանքը:

- **Որքանո՞վ է խորհրդարանը հանդիպում քաղաքացիներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին եւ գիտակրթական ոլորտի ներկայացուցիչներին՝ քննարկելու ԿՀՆ-ներին կամ զարգացմանը վերաբերող հարցեր:**
  - Եթե խորհրդարանականները ցանկանան հանդիպել հանրության հետ՝ քննարկելու ԿՀՆ հարցեր, ի՞նչ աջակցություն պետք է խորհրդարանի քարտուղարությունը տրամադրի դրա իրականացման համար:
  - Կարո՞ղ է այսպիսի մոտեցումը համակարգային դարձվել խորհրդարանում: Եթե այո, ապա ինչպես:
  - Արդյոք հատուկ ջանքեր են գործադրվում՝ հաղորդակցվելու ավելի երիտասարդ սերունդների հետ:

- **Որքանով են խորհրդարանական հանձնաժողովները իրականացնում տեղային այցեր՝ վերահսկելու ԿՀՆ իրականացումը եւ ԿՀՆ-ների հետ կապված ծրագրերի ազդեցությունը մարզերի եւ համայնքների վրա:**
  - Արդյոք խորհրդարանական հանձնաժողովները բավարար լիազորություն եւ/կամ միջոցներ ունեն տեղային այցեր կատարելու:
  - Եթե/երբ խորհրդարանական հանձնաժողովները տեղային այցեր են կատարում, արդյոք որոշակի ջանքեր են գործադրվում՝ հանդիպելու ուշադրությունից դուրս մնացած կամ խոցելի համայնքների հետ (օրինակ՝ կանայք, երիտասարդներ կամ աղքատ մարդիկ):

Հարցերի խումբ 8. Ինչպես ապահովել, որ ԿԶՆ-ները ծառայեն ամենակարիքավորներին

«Օրակարգ 2030»-ը հատուկ ամրագրում է, որ «ոչ ոք չպետք է անտեսվի»: Նպատակ 5-ի միանշանակ թիրախը գենդերային անհավասարությունն է, իսկ 10-րդ նպատակը կառավարություններին կոչ է անում ավելի լայն իմաստով կրճատել անհավասարությունները: «Օրակարգ 2030»-ը հստակորեն ընդգծում է, որ այս նպատակներին հասնելու համար երկրները պետք է ուղղակիորեն լուծեն գենդերային անհավասարության խնդիրը եւ ամենայն ջանք գործադրեն՝ ներգրավելու մեկուսացված եւ խոցելի խմբերին: Սրա համար կպահանջվեն տեղայնացված մոտեցումներ ըստ աշխարհագրության (օրինակ՝ որոշ գյուղական համայնքների համար հնարավոր է պակաս հասանելի լինեն ծառայությունները), ժողովրդագրության (օրինակ՝ հնարավոր է հատուկ ջանքեր հարկավոր լինեն՝ աջակցելու երիտասարդների համար արդարադատության համակարգի հասանելիությանը) կամ բնակչության այլ ցուցանիշների: Խորհրդարանը կարող է ակտիվորեն օգտագործել իր լիազորությունները՝ ապահովելու, որ հաշվի առնվեն խոցելի խմբերի կարիքները:

Մաս Ա. Ելակետային իրավիճակի որոշարկում

- **Արդյո՞ք ուշադրությունից դուրս մնացած եւ խոցելի խմբերը հստակորեն որոշարկվել են ձեր երկրի կողմից:**
    - Եթե այո, ապա ուշադրությունից դուրս մնացած/խոցելի քանի՞ խումբ կա: Ընդհանուր բնակչության ո՞ր մասն են նրանք ներկայացնում: Նրանց որոշարկման համար ի՞նչ չափանիշներ են օգտագործվել:

- **Արդյո՞ք ազգային թիրախներն ու ցուցանիշները հաշվի են առնում թերներկայացված, ուշադրությունից դուրս մնացած եւ խոցելի խմբերին:**
    - Արդյո՞ք խորհրդարանի համար հասանելի են տարաբաժանված տվյալներ այս խմբերի վրա ԿԶՆ-ների ազդեցության վերաբերյալ:

- **Ինչպե՞ս են այս խմբերը ներկայացված խորհրդարանում (օրինակ՝ կանայք, երիտասարդները, տեղաբնիկ ժողովուրդները, հաշմանդամություն ունեցող անձինք, էթնիկական կամ մշակութային փոքրամասնությունները):**

- **Եղե՞լ է որեւէ վերլուծություն ուշադրությունից դուրս մնացած**

եւ խոցելի խմբերի հատուկ իրավական, քաղաքականության կամ ծրագրային կարիքների վերաբերյալ, երբ որոշարկվում էին ԿԶՆ իրականացման ազգային առաջնահերթությունները:

- **Արդյոք խորհրդարանը հատուկ ջանք է գործադրում՝ թերներկայացված եւ խոցելի խմբերին ԿԶՆ-ներին առնչվող հարցերի վերաբերյալ խորհրդակցություններում ներառելու (օրինակ՝ խորհրդարանական հանձնաժողովների միջոցով կամ տեղային այցերի ժամանակ):**

Նախորդող 12 ամսվա ընթացքում.

- քանի՞ խորհրդարանական քննարկում է նվիրված եղել խոցելի եւ ուշադրությունից դուրս մնացած խմբերի իրավունքներին եւ կարիքներին.
- քանի՞ լսում է կազմակերպվել խոցելի կամ ուշադրությունից դուրս մնացած խմբերի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Մաս Բ. Ձեր ջանքերի ազդեցության ինքնուրույն վերլուծություն

- **Ի՞նչ քայլեր է խորհրդարանը ձեռնարկել՝ ապահովելու, որ «ոչ ոք անտեսված չլինի» ԿԶՆ-ների իրականացման ընթացքում:**
  - Որքանո՞վ է խորհրդարանականների համար հասանելի տեղեկատվությունը խոցելի խմբերի տնտեսական եւ սոցիալական պայմանների վերաբերյալ՝ համեմատ բնակչության մնացյալ հատվածի, երկրում խոցելի խմբերի հիմնական բողոքների եւ պահանջների վերաբերյալ, ինչպես նաեւ խոցելի խմբերի իրավունքների լիարժեք իրացմանը խանգարող հիմնական մարտահրավերների վերաբերյալ (օրինակ՝ քաղաքական, տնտեսական, մշակութային):
  - Որքանո՞վ են խորհրդարանականներն օգտվում այս տեղեկություններից օրենսդրություն մշակելիս, բյուջեներ ընդունելիս եւ ԿԶՆ-ների իրականացումը դիտարկելիս:

- **Ի՞նչ ռազմավարություններ է խորհրդարանը ներկայացրել (եթե ներկայացրել է այդպիսիք)՝ խթանելու բազմազանությունը խորհրդարանում: Խորհրդարանական ի՞նչ մեխանիզմներ[15] են հաջողված եղել բազմազանության խթանման հարցում եւ ին-**

15 Օրինակ՝ խորհրդարանի կանոնակարգերը, քաղաքական կուսակցությունների կանոնադրությունները, խոցելի խմբերի իրավունքներին նվիրված խորհրդարանական որոշակի հանձնաժողովները, եւ վերապատրաստման դասընթացները խորհրդարանականների համար մարդու իրավունքների եւ/կամ ուշադրությունից դուրս մնացած որոշակի խմբերի իրավունքների վերաբերյալ:

չու: Ինչ գործոններ կարող են խրախուսել տարբեր հենք ունեցող մարդկանց աշխատել խորհրդարանում կամ հակառակը՝ ապախրախուսել այդպես վարվելուց:

- Արդյո՞ք խորհրդարանը մշտադիտարկում է թերներկայացված եւ ուշադրությունից դուրս մնացած խմբերի ներկայացվածությունն իր կազմում, այդ թվում՝ այդպիսի խմբեր ներկայացնող մարդկանց քանակը, որոնք պատասխանատու կամ որոշում կայացնող պաշտոններ են զբաղեցնում խորհրդարանում:

- **Ինչ այլ մոտեցումներ կարող էին իրագործվել թերներկայացված կամ ուշադրությունից դուրս մնացած խմբերի ձայները եւ տեսանկյունները ԿԶՆ հարցերի վերաբերյալ խորհրդարանական գործընթացներում լսելի դարձնելու համար (օրինակ՝ ոչ խորհրդարանականներին խորհրդարանական հանձնաժողովներում նշանակելով եւ ուշադրությունից դուրս մնացած խմբերի անդամներին որպես հանձնաժողովների խորհրդատուներ աշխատանքի ընդունելով):**

Ռեսուրսներ

Հասկանալ ԿԶՆ-ները

- A/RES/70/1. Transforming our world: the 2030 Agenda for Sustainable Development. http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/70/1&Lang=E
- A/RES/69/313. Addis Ababa Action Agenda of the Third International Conference on Financing for Development. http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/ RES/69/313&Lang=E
- United Nations Development Group (2015). Mainstreaming the 2030 Agenda for Sustainable Development: Interim reference guide to UN Country Teams. http://www.undp.org/content/dam/ undp/library/MDG/Post2015-SDG/UNDP-SDG-UNDG-Reference- Guide-UNCTs-2015.pdf
- Sustainable Development Solutions Network (2015). Getting started with the Sustainable Development Goals,
- A guide for stakeholders. http://unsdsn.org/wp-content/uploads/2015/12/151211-getting-started-guide-FINAL-PDF-.pdf

Խորհրդարանները եւ ԿԶՆ-ները

- Հանոյի հռչակագիր: «Կայուն զարգացման նպատակները. խոսքերի վերածում գործողությունների»: Ընդունվել է ՄԽՄ 132-րդ խորհրդաժողովում, Հանոյում, 2015 թ. ապրիլի 1-ին, http://www.ipu.org/conf-e/132/rpt-gendebate.htm
- «Ժողովրդավարության ծառայեցումը խաղաղությանը եւ կայուն զարգացմանը. Այնպիսի աշխարհի կառուցում, որը ցանկանում են մարդիկ»:
- Խորհրդարանների խոսնակների չորրորդ համաշխարհային համաժողովում ընդունված հռչակագիր, Նյու Յորք, սեպտեմբերի 2, 2015 թ. http://www.ipu.org/ splz-e/speakers15/declaration.pdf

ԿԶՆ-ներին առնչվող օգտակար վեբկայքեր

- United Nations Sustainable Development Knowledge Portal. https://sustainabledevelopment.un.org/frameworks
- High Level Political Forum on Sustainable Development Goals. https://sustainabledevelopment.un.org/hlpf
- Open Working Group on Sustainable Development Goals. https://sustainabledevelopment.un.org/owg.html

- United Nations Global Compact SDGs Briefs. https://www.unglobalcompact.org/library/1401
- WorldWeWant. https://www.worldwewant2030.org/

Խորհրդարանների եւ ԿԶՆ-ների օգտակար վեբկայքեր

- Միջխորհրդարանական միություն. www.ipu.org
- Agora Parliamentary Portal SDGs pages. http://www.agora-parl.org/resources/aoe/sustainable- development-goals-sdgs-post-2015-agenda

Երախտիքի խոսք

ՄԽՄ-ն երախտապարտ է Չարմեյն Ռոդրիգեսին՝ գործիքակազմի տեքստի նախագծի մշակման համար: Տեքստը հղկվել է նաեւ բազմաթիվ երկրների եւ տարածաշրջանների խորհրդարաններից եւ խորհրդարանականներից ստացված մեկնաբանությունների, առաջարկների եւ մասնակցության շնորհիվ, որոնց ՄԽՄ-ն հայտնում է իր երախտագիտությունը: Հատուկ շնորհակալություն ՄԱՀԾ-ին՝ մեկնաբանությունների եւ երկրների մակարդակով ուղեցույցի տարբեր նախագծերի թեստավորման հարցում աջակցության համար:

ՄԽՄ-ն իր երախտագիտությունն է հայտնում Չինաստանի Ազգային ժողովրդական կոնգրեսի կողմից այս հրատարակության պատրաստման համար հատկացված ֆինանսական աջակցության համար:

Inter-Parliamentary Union

For democracy. For everyone.

+41 22 919 41 50
+41 22 919 41 60
postbox@ipu.org

Chemin du Pommier 5
CH-1218 Le Grand-Saconnex
Geneva
www.ipu.org